

Հայաստան

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ



SABER երկրի զեկույց
2019թ. հոկտեմբեր

Քաղաքականության ուղղությունները

Կարգավիճակը

1. Բարձրագույն կրթության ռազմավարություն

Ներկայում Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտի ռազմավարական ծրագրային փաստաթուղթ առկա չէ: Այս ոլորտում Կառավարության նպատակները հակիրճ արձանագրված էին 2019թ. փետրվարին հաստատված Կառավարության ծրագրում: Կառավարության ծրագրի գործողությունների պլանը մշակվել և հաստատվել է 2019թ. մայիսին: Նոր կառավարությունը պլանավորում է մոտ ապագայում մշակել ոլորտի ռազմավարական ծրագիրը:



2. Համակարգերի և հաստատությունների կառավարում

Մասնավոր և միջպետական հաստատություններն ունեն զգալիորեն ավելի մեծ ինքնավարություն, քան պետական բուհերը, մասնավորապես կառավարման և ֆինանսական հարցերում: Կարգավորման շրջանակում ներառված են մի շարք դրույթներ՝ ուղղված մարդկային ռեսուրսների վերաբերող մերիտոկրատիկ և հորիզոնական կառավարման աշխատակարգերին, սակայն դրանք հիմնականում կիրառելի են պետական համալսարանների նկատմամբ: Հայաստանի կառավարությունը մշակել է հակակոռուպցիոն ռազմավարություն, սակայն ըստ ընկալումների այն արդյունավետ չէ:



3. Ֆինանսավորում

Պետական բուհերի համար կա ֆինանսավորման կայուն մեխանիզմ: Այն թափանցիկ է, թեև համարվում է ոչ արդիական: Կատարողականի վրա հիմնված ֆինանսավորումն այս պահին չի կիրառվում, թեև կառավարությունը մտածում է այն մոտ ապագայում ներդնելու ուղղությամբ: Համալսարանները կարող են ստանալ ֆինանսավորում կրթության, հետազոտության և նորարարության համար մրցակցային հիմունքներով:



4. Որակի ապահովում

Գոյություն ունի որակի ապահովման և հավատարմագրման գործակալություն (ՈԱԱԿ), սակայն այս պահին նրա գործունեությունը հիմնականում ուղղված է պետական բուհերին: ՈԱԱԿ-ը մշակել է որակի ապահովման չափորոշիչներ, որոնք ներկայում իրականացվում են բուհերի կողմից: Պետական բուհերի դեպքում հավատարմագրման չափորոշիչներին անհամապատասխանությունը կարող է հանգեցնել մի շարք հետևանքների, այնինչ մի շարք միջպետական համալսարաններ աշխատում են առանց հավատարմագրման: Ներկայում աստիճան շնորհող ծրագրերի համար պարտադիր հավատարմագրում սահմանված չէ:



5. Բարձրագույն կրթության կառավարման տեղեկատվական համակարգ (TEMIS)

Կա երկրում գործող համալսարանների կառավարման տեղեկատվական համակարգ, թեև այն այս պահին չի գործարկվում: Այնուամենայնիվ, մի շարք համալսարաններ գործածում են կառավարման սեփական տեղեկատվական համակարգը՝ իրենց գործառնությունների մասին տվյալներ հավաքելու համար:



6. Մատչելիություն և հավասար հնարավորություններ

Կառավարությունն ունի մի շարք միջոցներ՝ բարելավելու մատչելիությունը և հավասար հնարավորությունները, սակայն տարբեր մակարդակներում ռեսուրսների անարդյունավետ օգտագործումը խոչընդոտ է այդ ջանքերի համար: Մոցիալապես անապահովների համար համալսարանական կրթությունն ավելի հասանելի դարձնելու նպատակով հարկ է ֆինանսական աջակցությունը դարձնել ավելի թիրախային. հարկ է, որ համալսարանները կապ հաստատեն ավագ դպրոցների հետ, մինչև ժամանակ խրախուսելով աշակերտներին հանձնել ընդունելության քննություններ: Հարկ է նաև ուշադրություն դարձնել հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին ներառական կրթության համատեքստում:



Emerging



7. Բարձրագույն կրթության վերաբերելիությունը սոցիալական և տնտեսական կարիքներին

Կառավարությունն ունի մի շարք խթաններ՝ բարելավելու բարձրագույն կրթության համակարգի վերաբերելիությունը: Աշխատաշուկայի հետ ուսումնական ծրագրի համապատասխանությունը խնդիր է, և մասնագիտական պրակտիկաների մեծ մասը ֆորմալ բնույթ են կրում՝ առանց իրական ուսումնառության հնարավորությունների:

Ներածություն

Սույն զեկույցի նպատակն է օգնել Հայաստանի Հանրապետության կառավարությանը և շահագրգիռ կողմերին՝ մշակել բարձրագույն կրթության ոլորտի ռազմավարություն: Ձեկույցում կիրառված է «Կրթական արդյունքների բարելավմանն ուղղված մոտեցում – բարձրագույն կրթություն» (SABER-TE) մեթոդաբանությունը, որը հայտորոշիչ գործիք է՝ գնահատելու, թե ինչպես են աշխատում կրթական համակարգերը և հատկորոշելու ազգային մակարդակում բարեփոխումների առաջնահերթությունները: Այն Համաշխարհային բանկի՝ Կրթական արդյունքների բարելավմանն ուղղված մոտեցման (SABER) մասն է կազմում, որը համեմատական վերլուծությամբ (հենանշման միջոցով) ուսումնասիրում է կրթական համակարգերը երկրի մակարդակում:

SABER-TE գործիքը կենտրոնանում է բարձրագույն կրթության քաղաքականության յոթ ուղղությունների վրա (տե՛ս Երջանակը): Ընդհանուր գաղափարն այն է, որ ուժեղ քաղաքական միջավայրը նախապայման է երրորդ բարձրագույն ուսումնական հաստատությունների, այդ թվում՝ համալսարանների, ինչպես նաև քոլեջների, ՄԿՈՒ հաստատությունների ավելի արդյունավետ գործունեության համար: Հայտորոշիչ գործիքի նպատակն է օգնել երկրներին գնահատել լավագույն աշխատակարգերը և որոշարկել, թե որ քաղաքականությունների վրա է անհրաժեշտ անհապաղ կենտրոնացնել ուշադրությունը: Քաղաքականության մի շարք ոլորտների դեպքում երկրները գնահատվում են կոնկրետ «քաղաքականության լծակների» հիման վրա՝ նպաստելու բարելավմանն ուղղված կոնկրետ խորհրդատվությունների ձևակերպմանը:

Հաջողված բարձրագույն կրթության համակարգի քաղաքականության յոթ ուղղությունները (Համաշխարհային բանկ, 2016թ.):

1. Հստակ և ապացուցահեն ռազմավարություն բարձրագույն կրթության համար
2. Համակարգերի և հաստատությունների ժամանակակից կառավարում
3. Ֆինանսավորում, որը խթանում է կատարողականը և նորարարությունը
4. Անկախ որակի ապահովում
5. Բարձրագույն կրթության կառավարման տեղեկատվական արդյունավետ համակարգ (TEMIS)
6. Մատչելիություն և հավասար հնարավորություններ՝ սոցիալական շարժունությունը ապահովելու համար
7. Երկրի սոցիալական և տնտեսական կարիքներին վերաբերելիություն

Քաղաքականության յոթ ուղղություններից յուրաքանչյուրը կարող է դրականորեն անդրադառնալ բարձրագույն կրթության համակարգերի արդյունքների վրա, թեև դրանք գործում են որպես մեկ ամբողջություն: Չոր օրինակ, ռազմավարական ծրագիրն առանց արդյունավետ կառավարման կառուցվածքի պարզապես գաղափարների հավաքածու է, որոնք չեն իրականացվելու. լավ մշակված կառավարման կառուցվածքն առանց ռազմավարական ծրագրի անիմաստ բյուրոկրատիա է:

Համաշխարհային բանկը հատկորոշել է այս ուղղություններից յուրաքանչյուրի համար լավագույն աշխատակարգերը՝ աշխարհի ամենաարդյունավետ բարձրագույն կրթության համակարգերի փորձից (Համաշխարհային բանկ 2016ա): Լավագույն աշխատակարգերի ցուցանիշները, որոնք կիրառվում են ըստ միավորների դասակարգման համար, ներկայացված են սույն զեկույցի հավելվածում: Երկրները միավորներ են ստանում և ապա հենանշում է արվում քաղաքականության այս ուղղությունների մասով չորս տարբեր միավորներով՝

1. **Լատենտ**՝ սույն թեման չափազանց քիչ ուշադրության է արժանացել,

2. **Զարգացող**՝ կան լավ աշխատակարգերի մի շարք օրինակներ,
3. **Կայացած**՝ պատշաճ աշխատակարգերը համակարգային բնույթ են կրում, և
4. **Առաջանցիկ**՝ երկիրը հետևում է միջազգային լավագույն փորձին և օրինակ է ծառայում այլոց համար:

SABER-ն օգտագործում է ընդարձակ հարցաթերթ՝ բարձրագույն կրթության համար քաղաքականության միջավայրի մասին տվյալներ հավաքելու համար: Հարցաթերթը լրացվում է համապատասխան օրենսդրության, քաղաքականության փաստաթղթերի և ոլորտի զեկույցների ամենավերջին տարբերակների վերլուծության միջոցով: SABER-ի թիմը նաև դաշտային աշխատանքներ է իրականացրել Հայաստանում 2018թ. հուլիսից 2019թ. մարտ ամիսն ընկած ժամանակահատվածում՝ այցելություններ կատարելով մի քանի համալսարաններ, պետական կառավարման մարմիններ և այլ շահակից հանդիսացող հաստատություններ: Տվյալների հավաքումն ավարտելուն պես քաղաքականության ուղղությունները գնահատվում են ըստ գնահատման սանդղակի (տե՛ս Հավելված 1-ը՝ գնահատման սանդղակի լիարժեք պատկերը տեսնելու համար):Թե՛ հարցաթերթին տրվող պատասխանները, թե՛ գնահատման սանդղակին համապատասխան տրված միավորները հասանելի են SABER-ի կայքից (<http://saber.worldbank.org>):

Սույն զեկույցի բովանդակությունը ներկայացվում է հետևյալ կերպ. նախ՝ մենք նկարագրում ենք Հայաստանի բարձրագույն կրթության համակարգը: Ապա մենք ներկայացնում ենք քաղաքականության յոթ ուղղությունների գնահատականը համապատասխան նկարագրություններով, որին հետևում է եզրակացությունը՝ Հայաստանի բարձրագույն կրթության վերաբերյալ մի քանի ընդհանուր դիտարկումներով և խորհրդատվություններով:

Համատեքստ

Հայաստանը Համաշխարհային բանկի Մարդկային կապիտալի օրակարգն առաջինը որդեգրած երկրներից է՝ Հայաստանի՝ «Մարդկային կապիտալի ինդեքսի» ցածր ցուցանիշից հետո: Հայաստանը այս ինդեքսով գնահատված 157 երկրներից 78-րդն էր՝ գրանցելով տարածաշրջանի մյուս երկրների համեմատ շատ ավելի ցածր ցուցանիշ, թեև վերջինս մի փոքր ավելի բարձր էր եկամուտի հիման վրա կանխատեսումների ֆոնին: Կարևոր է նշել, որ մարդկային կապիտալը Հայաստանում կայուն է կամ նվազող: Թույլ առողջության և կրթական ցածր մակարդակների պատճառով, աշխատողներն իրացնում են իրենց ներուժի միայն 57%-ը: 2012թ. արտադրողականությունը մի փոքր ավելի բարձր էր՝ 58%: Խնդրի հիմքում կրթությունն է: Ակնկալվում է, որ Հայաստանում երեխաները պետք է դպրոցում սովորեն 11.1 տարի, ինչը նշանակում է, որ միջին վիճակագրական երիտասարդը չի հասնում մինչև բարձրագույն կրթության մակարդակ: Կարևոր է այն, որ երբ վերահաշվարկում ենք դպրոցում ուսումնառության տարիները ուսումնառության վերջնարդյունքների հետ համեմատությամբ, պարզվում է, որ երեխաները սովորում են ընդամենը 7.9 տարվան համարժեք բովանդակություն: Ուստի աշակերտները միջազգայնորեն համադրելի գնահատումներից ցածր միավորներ են ստանում:

Հայաստանը բարձր-միջին եկամուտ ունեցող երկիր է, որի անվանական ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով 3,872 ԱՄՆ դոլար է (2017թ.) և որը շարունակաբար արձանագրել է ուժեղ տնտեսական աճ վերջին տարիներին:

Ապրանքների և ծառայությունների, առաջնայնորեն տուրիզմի ոլորտում արտաքին և տեղական պահանջարկի աճի և գուտ եկամուտների, դրամական փոխանցումների և ներդրումների աճի արդյունքում, 2017 թ. գրանցվել է 7.5 տոկոս, իսկ 2018թ. առաջին վեց ամիսներին՝ 8.5 տոկոս տնտեսական աճ: Աճը դանդաղեց 2018թ. երկրորդ կեսին՝ պահպանվելով 3 տոկոսի ցուցանիշին մոտ տիրույթում, այնուամենայնիվ, ամենամյա աճի ցուցանիշը մնացել է առողջ 5.2 տոկոսի չափով:

Չնայած վերջերս գրանցված տնտեսական աճի, երկրի համար խնդրահարույց են բնակչության քանակի նվազումը, աղքատության և գործազրկության բարձր ցուցանիշները, ի լրումն որոնց առկա է նաև գենդերային խզում: 2018թ. դրությամբ Հայաստանն ունի 2.93 միլիոն բնակչություն: Բավականին տևական ժամանակային կտրվածքում բնակչության թիվը նվազել է՝ 1990թ. մոտավորապես 3,5 միլիոնից 2018թ. հասնելով 3 միլիոնից մի փոքր պակաս ցուցանիշի: Հայաստանը զգալի առաջընթաց է ունեցել՝ 2004թ. դրությամբ աղքատության 54% ցուցանիշը 2017թ. -ին նվազեցնելով մինչև 25.7%: Վերջին ժամանակներում աղքատության կրճատումը զգալիորեն դանդաղ է ընթանում. զգալի կրճատումները գրանցվել են միայն 2012 և 2017 թվականներին: Չնայած այս առաջընթացին, Հայաստանի աղքատության ցուցանիշները դեռևս ամենաբարձրերից են Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում (ԵԿԱ),¹ քանի որ բնակչության մեկ քառորդն աղքատ է: Գործազրկության մակարդակը բարձր է եղել ֆինանսական

¹ 2017թ., Հայաստանի բնակչության 12.3 տոկոսն ապրում էր ցածր-միջին եկամուտ ունեցող երկրների համար Համաշխարհային բանկի աղքատության միջազգային գծից՝ մեկ շնչին օրական 3.20 ԱՄՆ 2011թ. դոլարի գնողունակության համարժեքայնության չափանիշով, ինչն աղքատության չորրորդ ամենաբարձր ցուցանիշն է հասանելի տեղեկատվություն ունեցող ԵԿԱ երկրների շարքում:

ճգնաժամից ի վեր, իսկ ըստ վերջին գնահատականների այն կազմում է 17.8% (2017թ.) և փոքր-ինչ ցածր է 2015թ. 18.5%-ից: Ի վերջո, գենդերային խզումը և անհավասարակշռությունները նույնպես սահմանափակում են Հայաստանի՝ ողջ տնտեսական ներուժի իրացումը: Հայաստանը զբաղեցրել է 98-րդ տեղը 149 երկրներից Համաշխարհային տնտեսական ֆորումի Գլոբալ գենդերային խզման ինդեքսի 2018թ. տվյալով՝² բարելավելով իր դիրքերը 2015թ. զբաղեցրած 105-րդ հորիզոնականի համեմատ:

Նոր կառավարությունը նոր մոտեցում է դրսևորում կառավարման և մարդկային զարգացման նկատմամբ: 2018թ. գարնանը համահայաստանյան մեծածավալ փողոցային բողոքները, որոնք անվանվում են Թավշյա հեղափոխություն, ստիպեցին Հայաստանի երկարամյա ղեկավարին հեռանալ իշխանությունից: Թեև փողոցային բողոքների մասշտաբը և կառավարության արագ տապալումը բոլորի համար անակնկալ էր, Հայաստանի՝ սեփական կառավարությունից ունեցած դժգոհությունը հասունացնել էր տարիներ շարունակ:³ Չնայած երկիրը վերջին տարիներին ձեռնարկել էր մի շարք բարեփոխումներ, Հայաստանի կատարողականի ցուցանիշներն ավելի ցածր են կոռուպցիոն ցուցանիշներով տարածաշրջանային համեմատություններում: Երկիրը Թրանսփերենսի Ինդեքսի Կոռուպցիայի ընկալման ցուցանիշով⁴ 2018թ. -ին 180 երկրների շարքում զբաղեցնում է 105-րդ հորիզոնականը և դասվում է երկրների ստորին երեսուն տոկոսի շարքին 2017թ. Համաշխարհային կառավարման ցուցանիշներով՝ կոռուպցիայի վերահսկողության, լսելիության և հաշվետվողականության, ինչպես նաև քաղաքական կայունության տվյալներով:⁵ Համաշխարհային տնտեսական ֆորումի 2018թ. Գլոբալ մրցունակության ինդեքսը ի հայտ է բերել Հայաստանի անարդյունավետ կառավարության ներքին վերահսկողության շրջանակներին, արդարադատության անկախության պակասին և քաղաքացիական ծառայողների առաջխաղացման գործում արժանիքների վրա հիմնված որոշումների բացակայությանն առնչվող հարցեր:⁶ Կառավարմանը վերաբերող մտահոգություններ են բարձրաձայնվել հանրային և տնտեսական կյանքի այլ ոլորտներում նույնպես: Կրթության ոլորտում դպրոցների և համալսարանների քաղաքականացումը թուլացրել է ուսումնառության արդյունքների բարելավման առաջնային նպատակի վրա կենտրոնացումը: Առողջապահական համակարգի թույլ կառավարումը հանգեցրել է առողջապահական վատ վերջնարդյունքների և տնային տնտեսությունների կողմից անասելիորեն բարձր ուղղակի և չփոխահատուցվող ծախսերի: Բնապահպանական օրենքների և կանոնակարգումների վատ

² World Economic Forum. 2018. *The Global Gender Gap Report 2018*. Geneva: WEF. Available at: http://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2018.pdf.

³ 2017թ. «Կովկասյան բարոմետրի»՝ Հայաստանի Կովկասյան հետազոտությունների ռեսուրս կենտրոնի կողմից թողարկվող երկամյա հանրային կարծիքի ուսումնասիրության տվյալների՝ հարցվածների 45 տոկոսն զգում էր, որ Հայաստանի քաղաքականությունը տարվում էր սխալ ուղղությամբ, իսկ 59 տոկոսը ասել էր, որ չի վստահում գործադիր կառավարությունը (մեծապես համահունչ է նախորդ՝ 2015թ. ուսումնասիրության արդյունքներին):

⁴ Transparency International. 2018. *Corruption Perceptions Index 2018*. Available at: <https://www.transparency.org/cpi2018>.

⁵ D. Kaufmann, A. Kraay, and M. Mastruzzi. 2010. “The Worldwide Governance Indicators: Methodology and Analytical Issues.” Interactive dataset available at: www.govindicators.org.

⁶ Klaus Schwab, ed. *Global Competitiveness Report 2018*. Geneva: World Economic Forum. Available at: <http://reports.weforum.org/global-competitiveness-report-2018/>.

կիրարկումը առաջ է բերել զգալի բնապահպանական պարտավորություններ կամ «Ժառանգված աղտոտվածություն» այնպիսի արդյունաբերական ճյուղերում, ինչպիսին է հանքահանումը:

Նոր կառավարությունը հանդես է եկել Հայաստանում հակակոռուպցիոն ջանքերի, լավ կառավարման, թափանցիկության և հաշվետվողականության նկատմամբ նոր հանձնառությամբ, ինչն արդեն իսկ անդրադառնում է բարձրագույն կրթության ոլորտի վրա: Այս ջանքերը մինչ օրս հանգեցրել են այնպիսի միջոցառումների, ինչպիսիք են քաղաքականության հետ փոխկապակցված գործարարների կողմից չվճարված հարկերի վերադարձը և բիզնեսներին թափանցիկ գործելու կոչերը: Թե վերլուծաբանները, թե քաղաքացիները հաղորդում են կոռուպցիայի նվազման մասին, իսկ «Էկոնոմիստ» պարբերականը Հայաստանն անվանել է 2018թ. «Տարվա երկիր»՝ հիշատակելով ժողովրդավարության հեռանկարները և Թավշյա հեղափոխությանը հաջորդած վերականգնողական գործընթացները:⁷

Ոլորտային համատեքստը

Ներկայումս Հայաստանում բարձրագույն կրթություն են իրականացնում բազմապիսի հաստատություններ, այդ թվում՝ համալսարաններ, ակադեմիաներ և կոնսերվատորիաներ: Բարձրագույն կրթության համակարգն առաջարկում է երեք աստիճան՝ բակալավր, մագիստրոս և հետազոտող (ասպիրանտուրա, որը համարժեք է PhD մակարդակին): Այս աստիճանները փորձական հիմունքներով ներդրվեցին մի քանի համալսարաններում 1995թ. -ին, բայց ընդլայնված կերպով առաջարկվեցին 2005թ. -ին, երբ Հայաստանը միացավ Բոլոնիայի գործընթացին: Կա համալսարանի երեք տեսակ՝ պետական, մասնավոր և միջպետական՝ պետության մասնակցությամբ: Կրթության մասին օրենքն ընդունվել է 1999թ. -ին, որն ունի առանձին բաժին՝ նվիրված Բարձրագույն կրթությանը: 2004թ. Հայաստանի խորհրդարանն ընդունեց «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքը:

Հայաստանում բարձրագույն ուսումնական հաստատությունները (բուհ) ենթարկվել են էական փոփոխությունների՝ Հայաստանի՝ 1991թ. անկախացումից ի վեր: Խորհրդային ժամանակներում բուհերը գտնում էին պետության գաղափարախոսական և վարչական վերահսկողության ներքո: Խորհրդային համակարգի փլուզումից հետո բարձրագույն կրթության պահանջարկը մեծացավ, բայց համալսարաններում տեղերը սահմանափակ էին, և նույնիսկ բարձր միավորներ հավաքած դիմորդները չէին կարողանում ընդունվել բուհ: Համալսարանի ընդունելության ընթացակարգերի նկատմամբ հանրային վստահության կորստից և համակարգից դուրս մնացածների բողոքներից հետո կառավարությունը 1990-ականներին ներդրեց կենտրոնացված ընդունելության քննությունների համակարգը:

Հայաստանի տնտեսության՝ շուկայական համակարգի անցմամբ մասնավոր համալսարաններին թույլ տրվեց գործել, ինչը հանգեցրեց հաստատությունների, ինչպես նաև ուսանողների թվի էական աճի: 1991թ. Հայաստանում գործում էր ընդամենը 14 բուհ: 1995թ. երկրում սկսեցին գործել մասնավոր համալսարաններ, և համալսարանների թիվը հասավ 55-ի: Մինչև 1997թ. համալսարանների թիվը հասավ ամենաբարձր ցուցանիշին՝ 102

⁷ Economist. 2018. “What Happens Next in Armenia?” December 12.

համալսարան 56154 ուսանողով: Այնուհետ, համալսարանների թիվն աստիճանաբար նվազեց, և ներկայումս կա 61 բարձրագույն ուսումնական հաստատություն: Այս համալսարաններից 16-ը պետական է. 12-ը հիմնադրամներ են, այնինչ մյուս 4-ը պետական ոչ առևտրային կազմակերպություններ են: Միջպետական համալսարանները նույնպես հիմնադրամներ են: Մասնավոր համալսարանների կազմակերպարավական ձևերը տարբեր են: Նրանց մեծ մասը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ են (ՄՊԸ-ներ):

2005թ. Հայաստանը միացավ Բոլոնիայի գործընթացին, ինչը հանգեցրեց նրան, որ երկիրը կենտրոնանա Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելու համար լայնածավալ բարեփոխման օրակարգի վրա: Երկիրը որդեգրեց բարձրագույն կրթության եռաստիճան համակարգը և վերամշակեց իր ծրագրերը՝ համապատասխանեցնելով ուսումնառության արդյունքների և Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգին: Թեև այս բարեփոխումների մակարդակը մակերեսային է համարվում⁸, Կառավարությունը դեռևս հանձնառու է այս գործընթացի իրականացմանը: 2015թ. Հայաստանը հյուրընկալել է Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի Նախարարական գագաթաժողովը՝ ի ապացույց այդ հանձնառության: Գագաթաժողովի կոմյունիկեն վերակողմորոշվեց գործընթացը դեպի դասավանդման և ուսումնառության գործընթացի բարելավում:

«Մենք կքաջալերենք և կաջակցենք բարձրագույն ուսումնական հաստատություններին և դրանց աշխատակազմերին՝ խթանելու մանկավարժական նորարարությունը ուսանողակենտրոն ուսումնական միջավայրերում և լիարժեքորեն իրացնելու թվային տեխնոլոգիաների ներուժն ու առավելությունները ի շահ ուսումնառության և դասավանդման»:

Բարձր եկամուտների երաշխավորման և աղքատության կրճատման վրա ազդեցության շնորհիվ, բարձրագույն կրթությունը Հայաստանի բարեփոխումների օրակարգի հիմնական մասն է: «Հայաստանի սոցիալական պատկերի և աղքատության 2018թ.» զեկույցի համաձայն, Հայաստանում աղքատության ցուցանիշն ամենացածրն է բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում՝ մոտավորապես 1.8 անգամ ավելի ցածր, քան 16 տարեկաններից բարձր բնակչության համար ազգային միջին ցուցանիշը, և 2.4 և 2.5 անգամ ավելի ցածր, քան տարրական և թերի հանրակրթություն ունեցողներինը՝ համապատասխանաբար: Կրթության մնացած բոլոր մակարդակների շրջանավարտների հետ համեմատությամբ, ծայրահեղ աղքատության ցուցանիշն ամենացածրն էր բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում 2008 և 2017 թվականներին: 2017թ. համար այս ցուցանիշը 0.4% է, ինչը մոտ է 2008թ. բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում ծայրահեղ աղքատության 0.5% ցուցանիշին: Հանրակրթության շրջանավարտները աղքատների ամենամեծ խումբն են կազմում 53% ցուցանիշով: Սա այն խումբն է, որը դժվարությունների է բախվում աշխատանք որոնելիս՝ 17 և բարձր տարիքային խմբում:⁹

Չնայած բարձրագույն կրթության ոլորտն աճ է ապրել, իսկ պահանջարկը դեռևս զգալի է

⁸ OSF Armenia. 2014. Higher Education in Armenia Today: A Focused Review. CEU Higher Education Observatory. http://www.osf.am/wp-content/uploads/2013/11/OSF_HE_report.pdf

⁹ Social Snapshot and Poverty in Armenia 2018. https://www.armstat.am/file/article/poverty_2018_english_4.pdf

ընտանիքների և երիտասարդների շրջանում, ուրտորը ներկայումս սեղմվում և կոնսոլիդացիայի է ենթարկվում: Սա առաջնայնորեն պայմանավորված է ժողովրդագրական փոփոխություններով, այդ թվում՝ բնակչության թվի անկմամբ, արտագաղթի բարձր մակարդակով և մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատությունների համար ներմուծված կարգավորումներով: 2009 – 2018թթ. ուրտորը կրճատվել է 31%-ով ուսանողների թվի առումով, և 16 համալսարաններ (77-ից) ստիպված էին փակել իրենց դռները: Բացի այդ, 2010թ. կառավարությունը ներմուծեց կանոնակարգ, ըստ որի մասնավոր համալսարանների դիմորդները ստիպված էին հանձնել ընդունելության քննություններ (ինչպես և նրանց պետական համալսարան դիմող տարեկիցները): Այս քայլով նվազեց մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատություններ դիմողների թիվը: Հավատարմագրման գործընթացի ներմուծումը և մի շարք համալսարանների կողմից լիցենզավորման պահանջների չբավարարումը հանգեցրին մի շարք այլ համալսարանների փակման: Չնայած թվի այս նվազմանը, համալսարանները համակարգայնորեն կապ չեն հաստատում նոր խմբերի հետ, և անհավասարությունը խիստ բարձր է ուրտորում: 2004 – 2013թթ. , չնայած ուրտորի ընդլայնմանը, կայուն պահպանվում էր բարձրագույն կրթության նկատմամբ հասանելիության անհավասարությունը ընտանիքի սոցիալական նկարագրի հատկանիշով:¹⁰

Աղյուսակ 1. Հայաստանում բուհերի, ուսանողների և ՊԴ կազմի թվի տատանումները, 1991-2018թթ.

	1991	1997	2009	2018
Բուհերի թիվը	14	102	77	61
Ուսանողների թիվը	66,079	56,154	114,629	78,747
Դասախոսների թիվը	Չկան	8,303	12,196	10,937

Աղբյուրը՝ Տարբեր վիճակագրական տարեգրքեր, 1991-2018թթ.

Համակարգի արագընթաց ընդլայնումը ընթանում էր որակի անկմանը զուգահեռ, հատկապես մասնավոր հատվածում: Բազմաթիվ մասնավոր համալսարաններ ստեղծվեցին որպես բիզնես ձեռնարկություններ՝ ընտանիքների և երիտասարդության կողմից բարձրագույն կրթության պահանջարկը բավարարելու համար, որոնք չէին ներգրավում պատշաճ ՊԴ կազմ և չունեին պատշաճ շենք-շինություններ և պայմաններ մրցունակ կրթական ծրագրեր առաջարկելու համար: Մասնավոր համալսարանների թիվը սկսեց նվազել այն բանից հետո, երբ պետական համալսարանները զանգվածաբար վերագործարկեցին հեռակա կրթության ծառայությունները, որոնք կասեցվել էին անկախության առաջին մի քանի տարիների ընթացքում: Պարզ չէ, արդյոք համակարգի վերջերս տեղ գտած կոնսոլիդացիան և ուսանողների թվի անկումը հանգեցնում են ավելի լավ որակի, թե ոչ, հաշվի առնելով այն, որ համալսարանները կարող են ավելի ընտրողաբար ընտրել կադրերին:

Մակրո մակարդակի ցուցանիշների առումով կան հիմնավոր պատճառներ, որոնք հանգեցնում են Հայաստանի բարձրագույն կրթության որակի մասին շարունակական մտահոգությունների: Ըստ 2019թ. «Տաղանդների մրցունակության համաշխարհային զեկուլյի», որը հրապարակվում է ամեն տարի, ներկայումս հայաստանյան համալսարանները

¹⁰ Geven, K. (2014) Inequality in Armenian Higher Education, 2004-2013, Working Paper.

125 երկրների շարքում 78-րդն¹¹ են: Համալսարանների վարկանշավորման համար զեկույցում օգտագործվել են QS World University վարկանշավորման տվյալները: Հայաստանը 125 երկրներից 101-րդն է բարձրագույն կրթության ծախսերի մասում և 50-րդն է բարձրագույն կրթությունում ընդգրկվածության առումով: Ձեկույցում, ընդգրկվածության և ծախսերի մասին տվյալները հիմնված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի վիճակագրական ինստիտուտի հրապարակման վրա: Համալսարանների համար պետական ֆինանսավորումը շատ ցածր է: Բուհին բյուջեից տրվող տարեկան հատկացումը մոտավորապես 12 միլիարդ ՀՀ դրամ է, ինչը 25 միլիոն ԱՄՆ դոլրաից պակաս գումար է:

Չնայած կարգավորման մի շարք փորձերի, համալսարանների հավատարմագրման առաջին պաշտոնական փորձը ձախողվեց: 2008թ. ստեղծվեց «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն (ՈԱԱԿ)» հիմնադրամը՝ որակի ապահովման գործակալությունը, որը սկսեց մշակել հավատարմագրման չափանիշներն ու չափորոշիչները, ինչպես նաև հավատարմագրման ընթացակարգը: Գործունեության առաջին տարվա ընթացքում ՈԱԱԿ-ի խորհրդի նախագահը ՀՀ վարչապետն էր, ինչը ՈԱԱԿ-ի ինքնավարության մասին մտահոգությունների տեղիք տվեց: Ավելի ուշ ՈԱԱԿ-ի Հոգաբարձուների խորհրդի նախագահ դարձավ Հայաստանի Կենտրոնական բանկի ներկայացուցիչը:

Կառավարությունը տարբեր բարեփոխումներ է նախաձեռնում՝ բարելավելու բարձրագույն կրթության համակարգը: Կարևոր քայլերից մեկը «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի ներմուծումն էր 2005թ., ինչը հանգեցրեց Հայաստանի պետական բուհերի կառավարման նոր համակարգի: Նախքան օրենքի ընդունումը համալսարանների ռեկտորները նշանակվում էին վարչապետի կամ Կրթության և գիտության նախարարի կողմից: Օրենքը սահմանեց համալսարանների խորհուրդների ինստիտուտը՝ որպես պետական համալսարանների հիմնական կառավարման մարմիններ: Մի քանի տարիների ընթացքում Խորհուրդները քաղաքականացվեցին, քանի որ անդամների 25%-ը կարող էին լինել նշանակված պետական պաշտոնյաներ: Այնպիսի քաղաքական գործիչները, ինչպիսիք են Հայաստանի նախագահը, վարչապետները, Խորհրդարանի խոսնակները և այլ բարձրաստիճան քաղաքական առաջնորդներ դարձան Համալսարանների խորհուրդների նախագահներ և անդամներ (Համաշխարհային բանկ, 2013թ.): Մի շարք զեկույցներ են պատրաստվել միջազգային և տեղական փորձագետների կողմից, որոնցում բարձրացվել է Խորհուրդների քաղաքականացված լինելու հարցը՝ որպես համալսարանական ինքնավարությանը խոչընդոտող գործոն: ¹²¹³ 2018թ. տեղի ունեցած Թավշյա հեղափոխությունից հետո պետական համալսարանների խորհուրդները մի փոքր փոխվեցին

¹¹ INSEAD, The Addeco Group, TATA Communications. (2019). The Global Talent Competitiveness Index 2019: Entrepreneurial Talent and Global Competitiveness. <https://gtcistudy.com/wp-content/uploads/2019/01/GTCI-2019-Report.pdf>

¹² The World Bank. (2013). Addressing Governance at the Center of Higher Education Reforms in Armenia. pp. 23. Washington. DC.

¹³ OSF-Armenia, 2016. Strengthening Integrity and Fighting Corruption in Education: Armenia, Yerevan: Open Society Foundations - Armenia.

այն իմաստով, որ բարձրաստիճան քաղաքական առաջնորդները դեռևս կարող էին լինել խորհրդի անդամ, սակայն նախագահ լինել չէին կարող:

Հայաստանը գտնվում է «Բարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթության» օրենքի լրամշակման գործընթացում: Այս գործընթացը մեկնարկել է 2016թ. և օրենքի մի քանի նախագծեր են քննարկվել այդ ժամանակից ի վեր: Ամենավերջին տարբերակը հաստատվել է Կառավարության կողմից 2017թ. դեկտեմբերին և ուղարկվել է Ազգային Ժողով: 2018թ. Թավշյա հեղափոխությունից հետո օրենքի նոր նախագիծն է պատրաստվում: Ակնկալվում է, որ Օրենքի նոր նախագիծը կմիացվի «Գիտության մասին» օրենքին և 2019թ. կանցնի հանրային քննարկումների փուլ:

Քաղաքականության ուղղություն 1: Բարձրագույն կրթության ռազմավարություն **Ընդհանուր գնահատականը՝ Լատենտ ●○○○**

***Համառոտ նկարագրություն.** Ներկայումս Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտի ռազմավարական ծրագիր՝ որպես բացառիկ փաստաթուղթ առկա չէ: Այնուամենայնիվ, կառավարության՝ սույն ոլորտին վերաբերող հիմնական ռազմավարությունը և նպատակները ներկայացված են «Կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագրում», որը կորցրել է իր արդիականությունը: Կառավարությունը ներկայումս մշակում է բարձրագույն կրթությանը վերաբերող ռազմավարություն, սակայն ավարտի ժամկետները պարզ չեն:*

Սույն ուղղությունը վերանայում է բարձրագույն կրթությանը վերաբերող ռազմավարության արդյունավետությունը՝ կատարելով երեք հարցադրում: Առաջինը՝ արդյո՞ք երկրում առկա է ամբողջովին մշակված ռազմավարական ծրագիր այս ոլորտի համար: Երկրորդ՝ արդյո՞ք ռազմավարական ծրագիրը մշակվել է համապատասխան շահակիցների մասնակցությամբ: Եվ երրորդ՝ արդյո՞ք այն հիմնված է արդիական և հասարակայնորեն հասանելի ապացույցների վրա:

Ռազմավարական ծրագրի առկայությունը

Հայաստանը չունի բարձրագույն կրթության ռազմավարական ծրագրի փաստաթուղթ: Կառավարությունը հրապարակել է իր ռազմավարությունը և առանցքային նպատակները բարձրագույն կրթության վերաբերյալ «Կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագիր» կոչվող փաստաթղթում: Բարձրագույն կրթության համար առաջադրված նպատակները փաստաթղթում ներկայացվում են հետևյալ կերպ.

- ներմուծել Որակավորումների ազգային շրջանակ՝ Որակավորումների եվրոպական շրջանակին համահունչ,
- հիմնել և հզորացնել որակի ապահովման ազգային համակարգը,

- ներդնել բարձրագույն կրթության ֆինանսավորման արդյունավետ և կայուն համակարգ,
- ապահովել բարձրագույն կրթության վկայականների ճանաչում և համադրելիություն,
- խթանել ուսանողական շարժունությունը և մեծացնել հայկական կրթական համակարգի գրավչությունը և
- զարկ տալ ԲՈՒՀ-երի և գործատուների (աշխատաշուկա) միջև շփմանը , նպաստել սովորողների համար մասնագիտական խորհրդատվության տրամադրմանը և աշխատանքային խնդիրների լուծմանը:¹⁴

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (ԿԳՄՄՆ) ուներ ծրագրեր՝ մշակելու «Բարձրագույն կրթության 2016-2025թթ. ռազմավարություն», սակայն փաստաթղթի մշակումը դեռևս ավարտված չէ: Նոր ռազմավարության մշակման համար իրականացվել է իրագործելիության ուսումնասիրություն, որը հրապարկված է ԿԳՄՄՆ-ի կայքում: Մինևույն ժամանակ մշակման փուլում է նաև «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030թ. զարգացման պետական ծրագիր» փաստաթուղթը: Երկու փաստաթղթերն էլ անավարտ էին այն պահին, երբ նոր կառավարությունը եկավ իշխանության: Ներկայումս պարզ չէ՝ երբ կմշակվի բարձրագույն կրթության ռազմավարությունը, սակայն «Բարձրագույն կրթության մասին» օրենքը, որը կմիացվի «Գիտության մասին» օրենքին, կներկայացվի Ազգային ժողով 2019թ.:

Շահակիցների ներգրավվածություն

2017-2018թթ. «Բարձրագույն կրթության մասին» գոյություն ունեցող օրենքը վերանայելու իր ջանքերի շրջանակներում նախարարությունը անցկացրել է շահակիցների լայնածավալ խորհրդատվություն և ապահովել է տարբեր շահակիցների ներգրավվածությունը առաջարկվող օրինագծի դրույթները ներկայացնելիս: Նախարարությունը կազմակերպել է քննարկումներ արտաքին շահակիցների տարբեր խմբերի հետ, ինչպիսիք են զարգացման գործընկերները, բարձրագույն կրթության խնդիրներով զբաղվող ՀԿ-ները:

Ապացույցների կիրառում

Ապացույցների համակարգված կիրառումը դեռևս իրողություն չէ, քանի որ ռազմավարությունը դեռ չի վերջնականացվել: Ինչպես պարզ կդառնա Գլուխ 5-ում, դեռևս բարձրագույն կրթության կառավարման տեղեկատվական արդյունավետ և վերջնականացված համակարգ գոյություն չունի: Այնուամենայնիվ, կառավարությունը ձեռնարկել է հայտորոշիչ քայլեր՝ խթանելու օրենքի վերաբերյալ քննարկումները: Դոկտոր Մանյա Կլեմենչիչը կատարել է իրագործելիության ուսումնասիրություն, որտեղ ուշադրությունը բարձրագույն կրթության հնարավորությունների և արդյունավետության վրա էր: Եվս մեկ համընդգրկուն ուսումնասիրություն է հրատարակվել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանին առնթր «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից: 2018թ. Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների զեկույցը հրատարակվել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից: Ձեկույցի 4-րդ գլուխը վերաբերում է «Բարձրագույն կրթության ոլորտում կոռուպցիայի կանխարգելմանը և

¹⁴ «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, էջ 23, http://www.gdf.am/images/Education_Development_National_Programme_2011-2015_eng.pdf

քրեական հետապնդմանը»: Բացի այդ, ԿԳՄՄՆ-ը համագործակցում է մի շարք գործընկերների, այդ թվում՝ Համաշխարհային Բանկի հետ, իր ռազմավարության համար ապացուցողական հենք ձևավորելու գործում:

Քաղաքականության ուղղություն 2: Համակարգի և հաստատությունների կառավարում

Ընդհանուր գնահատականը՝ Կայացած ●●●○

Լծակ	Քաղաքականության լծակ 1: Համակարգի կառավարում	Քաղաքականության լծակ 2: Ինստիտուցիոնալ ինքնավարություն	Քաղաքականության լծակ 3: Լավ ինստիտուցիոնալ կառավարման տարածում
Լծակի գնահատական	Կայացած ●●●○	Կայացած ●●●○	Զարգացող ●●○○
Պետական համալսարաններ	-	Զարգացող ●●○○	Զարգացող ●●○○
Մասնավոր համալսարաններ	-	Կայացած ●●●○	Լատենտ ●○○○
Միջպետական հաստատություններ	-	Առաջանցիկ ●●●●	Լատենտ ●○○○

Համառոտ նկարագրություն. Գոյություն ունեն մի շարք օրենքներ և կանոնակարգեր, որոնք կառավարում են Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտի երեք հատվածները: Մասնավոր համալսարանները և միջպետական հաստատությունները ունեն զգալիորեն ավելի մեծ ինքնավարություն, քան պետական համալսարանները: Այս երեք հատվածների հաստատություններից ինքնավարությունից ամենաշատն օգտվում են միջպետական հաստատությունները: Ոլորտի տարբեր հատվածների միջև ինքնավարության այս տարբերությունները մանրամասն բացատրվում են ինստիտուցիոնալ ինքնավարությանը նվիրված բաժնում: Կարգավորման շրջանակը ներառում է որոշ դրույթներ՝ մարդկային ռեսուրսների հորիզոնական և արժանիքների վրա հիմնված ընտրության և առաջխաղացման գործողությունների, ինչպես նաև հորիզոնական կառավարման բարելավման նպատակով, սակայն դրանք հիմնականում կիրառելի են պետական համալսարանների համար: Հայաստանի կառավարությունը մշակել է Հակակոռուպցիոն ռազմավարություն, որն անդրադառնում է նաև բարձրագույն կրթության ոլորտին: Ռազմավարությանը կից առկա է նաև կրթության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի ծրագիր, սակայն այն մեծ արդյունավետություն չունի: Կան մի շարք միջոցներ ուղղված կառավարման մակարդակում մարդկային ռեսուրսներին վերաբերող թափանցիկ աշխատակարգերի, մարդկային ռեսուրսների ոլորտի աշխատակարգերի և հորիզոնական կառավարման մեթոդների խթանմանը, սակայն դրանք այնքան էլ արդյունավետ չեն և հիմնականում կիրառելի են պետական հատվածի հաստատությունների համար:

Այս ուղղությունն ուսումնասիրում է կառավարման համակարգի արդյունավետությունը կատարելով երեք հարցադրում: (1) Արդյո՞ք գոյություն ունի համընդգրկուն կարգավորման շրջանակ համակարգը կառավարելու համար: (2) Որքա՞ն ինստիտուցիոնալ ինքնավարություն է տրամադրվում բարձրագույն ուսումնական հաստատություններին: (3) Գոյություն ունե՞ն արդյոք քաղաքականություններ՝ ինստիտուցիոնալ լավ կառավարման

գործողությունները խթանելու համար:

2.1 Քաղաքականության լծակ: Համակարգի կառավարում

Կայացած ●●●○

Երեք հիմնական հարց կա կարգավորման շրջանակի վերաբերյալ: Առաջին կա՞ արդյոք արդյունավետ կարգավորման շրջանակ: Երկրորդ կարգավորման շրջանակն ունի՞ համապատասխան դրույթներ՝ կարգավորելու պետական և մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատությունների շուկա մուտքը և գործունեությունը: Երրորդ գոյություն ունե՞ն մեխանիզմներ ակադեմիական չարաշահումների և կոռուպցիայի դեմ պայքարելու համար:

Արդյունավետ կարգավորման շրջանակի առկայություն

Հայաստանում բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեությունը կարգավորվում է բուն կրթությանը վերաբերող և բուն կրթությանը չվերաբերող մի շարք օրենքներով: Բարձրագույն կրթության համակարգը կառավարող երկու հիմնական օրենսդրական ակտերն են 1999թ. «Կրթության մասին» օրենքը և 2004թ. «Բարձրագույն կրթության և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքը: Այս երկու օրենքներն էլ ուրվագծում են կառավարության, բարձրագույն ուսումնական հաստատությունների, ուսանողների, դասախոսների և կառավարման դերը, մասնավորապես՝ «Բարձրագույն կրթության մասին» օրենքը սահմանում է բարձրագույն կրթության քաղաքականությունը և որակի ապահովումը, ինչպես նաև սահմանում է ինստիտուցիոնալ ինքնավարությունը, կառավարման կառուցվածքները և կառավարման մոդելները:

Ի լրումն այս երկու օրենքների՝ պետական համալսարանները կարգավորվում են նաև «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների (ՊՈԱԿ) մասին» օրենքով: Այս օրենքը սկսեց կիրառվել պետական ուսումնական հաստատությունների նկատմամբ 2002-2003թթ., երբ նրանց կազմակերպաիրավական ձևը պետական մարմնից փոխվեց պետական ոչ առևտրային կազմակերպության: Կազմակերպաիրավական ձևի փոփոխությունը շփոթություն է ստեղծել ոլորտում, քանի որ «ՊՈԱԿ-ների մասին» օրենքը գրված չէ հատուկ ուսումնական հաստատությունների համար, հակասում է կրթության մասին օրենքներին և վտանգում «Բարձրագույն կրթության մասին» օրենքով համալսարանների համար սահմանված կառավարումը և ակադեմիական ինքնավարությունը: Հիմնական հակասություններից մեկն այն է, որ համաձայն կրթության մասին օրենքների բարձրագույն ուսումնական հաստատությունները առանձին իրավաբանական անձինք են, մինչդեռ համաձայն ՊՈԱԿ-ների մասին օրենքի՝ ՊՈԱԿ-ի հիմնադիրը իրավունք ունի ընդունել որոշումներ կազմակերպության կառավարման և դրան առնչվող այլ գործողությունների վերաբերյալ:

Վերջին տարիներին մի շարք համալսարաններ փոխել են իրենց կազմակերպաիրավական ձևը՝ ՊՈԱԿ-ից հիմնադրամի անցում կատարելով: Հիմնադրամի մասին օրենքը ավելի ճկուն է ֆինանսական ինքնավարության հարցերի առումով: Այսպիսով մինչ ՊՈԱԿ-ների մասին օրենքով առաջնորդվող համալսարանները պետք է ստացված ցանկացած եկամուտ

փոխանցեն պետական բյուջե, հիմնադրամները կարող են ծավալել ձեռնարկատիրական գործունեություն և իրենց պահել գոյացած եկամուտները: Միննույն ժամանակ, քանի որ «Հիմնադրամների մասին» օրենքը ակնհայտորեն չէր մշակվել բարձրագույն ուսումնական հաստատությունների վերաբերմամբ, գոյություն ունեն մի շարք կարևոր սահմանափակումներ համալսարանների համար, ինչպիսիք են ռեկտորի աշխատանքից ազատումը հոգաբարձուների խորհրդի կողմից, և այլն:

Հայաստանում բարձրագույն ուսումնական հաստատությունները կառավարող օրենքների անհամատեղելիությունը նպաստավոր դեր է ունեցել կառավարության կողմից ոլորտի նկատմամբ վերահսկողություն սահմանելու գործում: Վերջերս գրանցվեց մի դեպք. այն ցույց տվեց, որ համալսարանների համար հատուկ կազմակերպատիրավական ձևի բացակայությունը խնդիրներ է ստեղծում: Ֆինանսների նախարարությունը շեշտեց, որ համաձայն «Հիմնադրամների մասին» օրենքի գիտական ինստիտուտները և համալսարանների լաբորատորիաները չեն կարող ուղղակիորեն նպաստներ ստանալ պետական բյուջեից, այլ կարող են ստանալ ֆինանսավորում միայն մրցութային հիմունքներով: Օրենքների միջև շփոթության մեկ այլ օրինակ է համալսարանի ռեկտորի հրաժարականի հարցը: «Հիմնադրամների մասին» օրենքը թույլատրում է հոգաբարձուների խորհրդին աշխատանքից ազատել գործադիր տնօրենին (այս դեպքում՝ ռեկտորին) ցանկացած ժամանակ կախված քվեների քանակից, սակայն «Բարձրագույն կրթության և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքով այս գործընթացը չի կարգավորվում: Անհրաժեշտ է համապատասխանեցնել «Հիմնադրամների մասին» օրենքը և բարձրագույն ուսումնական հաստատություններին վերաբերող օրենսդրությունը, կամ ընդունել հատուկ կազմակերպատիրավական ձև համալսարանների համար:

Պետական և մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատությունների շուկա մուտքին և գործունեությանը վերաբերող կանոնակարգ

Գոյություն ունեն հաստատությունների գործունեությունը և շուկա մուտքը կարգավորող շրջանակներ Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների բոլոր հատվածներում, բացառությամբ միջպետական հաստատությունների, որոնք գործում են միջպետական համաձայնագրերի ներքո:

Բոլոր հատվածները ներկայացնող բարձրագույն ուսումնական հաստատությունները ենթակա են մշտադիտարկման՝ լիցենզավորման, պաշտոնական հավատարմագրման և որակի ապահովման ընթացակարգերի միջոցով: Հայաստանում գոյություն ունի լիցենզավորման գործակալություն, որը կարգավորում է համալսարանների լիցենզավորման ընթացակարգերը՝ Կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման կարգի հիման վրա, որը Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունել է 2009թ: Լիցենզավորման համար առկա են մի շարք պահանջներ, այդ թվում՝ պրոֆեսորադասախոսական կազմի 50 տոկոսը պետք է աշխատի մեկ դրույք բեռնվածությամբ, իսկ 50 տոկոսը ունենա գիտական աստիճան: Բացի այդ, կան պահանջներ լսարանների, լաբորատորիաների և գրադարանների համար: Լիցենզիան չունի որոշակի ժամկետ, բայց համալսարանները պետք է լիցենզիա ստանան յուրաքանչյուր մասնագիտության համար: Լիցենզիան նաև սահմանում է դասավանդման լեզուն(ները), համալսարանի կողմից առաջարկվող ծրագրերում

ուսումնառության ձևը (առկա և/կամ հեռակա) և ընդգկվող ուսանողների առավելագույն քանակը:

Բոլոր պետական համալսարանները անցնում են հավատարմագրում և պարբերաբար մշտադիտարկման են ենթարկվում, այնինչ մասնավոր համալսարանների և միջպետական հաստատությունների դեպքում իրավիճակը պարզ չէ: «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով բոլոր հաստատությունների համար սահմանվում է պահանջ՝ դիմել ինստիտուցիոնալ հավատարմագրման համար մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը, սակայն որոշ հաստատություններ դեռևս չեն կատարել այս պահանջը: Դեկտեմբերի 31-ի դրությամբ ՈԱԱԿ-ի տվյալների համաձայն՝ 13 մասնավոր համալսարաններ և 1 միջպետական համալսարան հենց այս խմբում են գտնվում: Երկու մասնավոր համալսարան տեղեկացրել է ՈԱԱԿ-ին, որ հավատարմագրման համար կդիմեն Որակի ապահովման եվրոպական ռեգիստրում գրանցած արտասահմանյան կազմակերպության: Ներկա պահին պարզ չէ, թե հետևանքներն ինչպիսին կլինեն չհավատարմագրված համալսարանների համար:

Ակադեմիական չարաշահումների և կոռուպցիայի դեմ պայքար

2015թ. Հայաստանի Հանրապետության կառավարությունը մշակել է «2015-2018թթ. հակակոռուպցիոն ռազմավարություն», որի իրականացման միջոցառումների ծրագրում բարձրագույն կրթությունը նշվում էր որպես առաջնահերթություն: Ռազմավարությանը գուզահեռ առկա է «Հակակոռուպցիոն ռազմավարությունը ՀՀ կրթության ոլորտում» և դիտարկում է բարձրագույն կրթությունը որպես կոռուպցիոն ռիսկի ենթակա ոլորտներից մեկը: «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագիրը մեկնարկել է 2015թ. հունվարին հիմնական նպատակ ունենալով բարձրացնել բարեվարքության ընդհանուր մակարդակը և նվազեցնել կոռուպցիայի դեպքերը ամբողջ երկրի բարձրագույն ուսումնական հաստատություններում: Այդ նպատակին տանող առաջին քայլը կարիքների գահատման ուսումնասիրությունն էր, որը ներառում էր հարցազրույցներ շահակիցների լայն շրջանակի հետ, և որը հասավ իր գագաթնակետին ապրիլյան «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության վրա ազդող գործոնների ռիսկերի վերլուծություն» վերնագրված հրապարակմամբ:

Հայաստանը ստեղծել է Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ և դրա աշխատանքին օժանդակող անկախ փորձագետների մշտական հատուկ հանձնաժողով (թասք ֆորս): Հատուկ հանձնաժողովում ներգրավված էր նաև կրթության փորձագետ, որը ստանձնել էր կրթության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի գնահատումը, իրականացման միջոցառումների ծրագրի մշակումն ու իրագործումը: 2017թ. քաղաքացիական հասարակության և այս ոլորտում ակտիվ հետազոտական կազմակերպությունների հետ լայնածավալ խորհրդատվություններից և ռիսկերը գնահատելուց հետո հատուկ հանձնաժողովը Խորհրդին ներկայացրեց «Կրթության ոլորտում հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիրը»: Այս ծրագիրը գոյություն ունի միայն թղթի վրա և չի կարող նվազեցնել կոռուպցիան և չարաշահումները համալսարաններում: Համալսարանական համընդգրկուն և թարմացված ծրագրի և արդյունավետ դասավանդման մոտեցումների պակասն է մեկն է այն պատճառներից, որոնք պայմանավորում են կոռուպցիայի և չարաշահումների դեպքերի շարունակականությունը: Արդյունքում

ուսանողները չեն ձգտում սովորել և նախընտրում են ուսումնառելու փոխարեն կարճ և հեշտ ճանապարհներ գտնել: Անձնակազմին ուղղված ֆինանսական խրախուսման պակասը նույնպես կարող է պատճառ հանդիսանալ: Դասախոսներից շատերը համատեղությամբ են աշխատում (աշխատում են մեկից ավելի հաստատություններում), ինչը նրանց թույլ չի տալիս կենտրոնացնել իրենց ջանքերը մեկ կոնկրետ աշխատավայրում:¹⁵

«Կրթության ոլորտում հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիրը» գտնում է, որ արտագրությունը և գրագողությունը ուսանողների և դասախոսների շրջանում մեծ տարածում ունեցող խնդիր է, սակայն այս ուղղությամբ մեծ արդյունավետության քայլեր չի նախատեսում: Հայաստանի հինգ խոշոր համալսարաններում անցկացված հարցման արդյունքում ուսանողների երկու երրորդը խոստովանեց ուսումնառության ընթացքում գրագողության դիմելու փաստը: Բարձրագույն ուսումնական հաստատությունների մեծ մասի դեպքում առկա չեն այս խնդրին արդյունավետ լուծում տալուն ուղղված հստակ քաղաքականություն և ընթացակարգեր: «2015-2018թթ. հակակոռուպցիոն ռազմավարությունը» նախատեսել է մի շարք քայլեր գրագողության խնդրին լուծում տալու նպատակով: Այդպիսի քայլերից են թեկնածուական ատենախոսությունների և մագիստրոսական թեզերի համար շտեմարանների ստեղծումը և դրանց կառավարման նպատակով համապատասխան միջոցառումների կատարումը: Այս ռազմավարությունը սահմանելու է պահանջ, ըստ որի համալսարանները պետք է ունենան հստակ սահմանված ընթացակարգեր՝ երաշխավորելու ուսանողների գիտական թեզերի և մագիստրոսական աշխատանքների օրիգինալությունը: ¹⁶ Համալսարաններին անհրաժեշտ է մշակել և գործադրել արդար և հաստատուն պաշտոնական քաղաքականություն, ընթացակարգեր և արձագանքման մեխանիզմներ՝ գրագողության անընդունելիության մասին իրազեկության մակարդակի բարձրացման և ակադեմիական բարեվարքության խթանման համար ծրագրերի մշակման նպատակով: Վերջերս Հայաստանի Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը բարձրացրել է մասնավոր այնպիսի նախաձեռնությունների կանոնակարգման հարցը, ինչպիսիք են www.referat.am, www.kursayin.am, www.diplomayin.am, www.bankreferat.am կայքերը, ինչպես նաև բազմաթիվ այլ կայքեր, որոնք առաջարկում են ատենախոսություն/թեզ գրելու վճարովի ծառայություններ՝ հաճախորդի անհատական պատվերով: Հանձնաժողովն առաջարկում է «Գովազդի մասին» օրենքում ավելացնել դրույթ և դրանով արգելել ուսանողների փոխարեն հետազոտական աշխատանք իրականացնելու ծառայությունների գովազդները: Ուսանողական գրագողությունը լայն տարածում ունի, և գրագողության ընդլայնվելու հնարավորությունները պետք է կանոնակարգավորվեն պետական մակարդակով:

¹⁵Altbach, P. Reisberg, L.,Yudkevich, M., Ed.; Androushchak, G., ; Pacheco, I. Paying the Professoriate: A Global Comparison of Compensation and Contracts. London Routledge. 2012

¹⁶OECD. 2018. Fighting Corruption in Eastern Europe and Central Asia. Anti-Corruption Reforms in Armenia. 4th Round of Monitoring of the Istanbul Anti-Corruption Monitoring Action Plan. PP. 155-165. <http://www.oecd.org/corruption/acn/OECD-ACN-Armenia-4th-Round-Monitoring-Report-July-2018-ENG.pdf>

2.2 Քաղաքականության լծակ: Ինստիտուցիոնալ ինքնավարություն Կայացած ●●●○

Ինչպես հիշատակվել է ներածության մեջ, լուրջ տարբերություններ կան պետական համալսարանների, մասնավոր համալսարանների և միջպետական հաստատությունների համար Հայաստանում առկա իրավական դաշտում: Սույն զեկույցն առանձին քննում է հաստատությունների այս տարբեր տեսակների ինքնավարության հարցը: Մենք նաև օգտվել ենք Հայաստանում բարձրագույն կրթության ոլորտի ինքնավարության մասին նախկինում արված հետազոտությունից, ինչն ի ցույց է դնում Հայաստանի համալսարանների ինքնավարության ցածր մակարդակը:¹⁷

Ինքնավարությունը կառավարման և ակադեմիական գործունեության տարբեր բնագավառներում էական նշանակություն ունի բարձրագույն ուսումնական հաստատությունների առաքելությունների իրականացման համար: Այստեղ մենք բարձրագույն ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ ինքնավարությունը դիտարկում ենք չորս տարբեր կողմերից. (1) ակադեմիական ինքնավարություն, (2) անձնակազմի համալրման ինքնավարություն, (3) կառավարման ինքնավարություն և (4) ֆինանսական ինքնավարություն.

Պետական համալսարաններ Զարգացող ●●○○

Ակադեմիական ինքնավարություն

«Կրթության մասին» օրենքը, ինչպես նաև «Բարձրագույն կրթության և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքը պետական համալսարաններին տալիս են զգալի ինքնավարություն, բայց իրականում համալսարանների մեծ մասը հետևում է կրթական պետական չափորոշիչներին և ուսումնական ծրագրերին: Կրթությանը վերաբերող օրենսդրությունում առկա են մի շարք հակասություններ: Օրինակ՝ «Կրթության մասին» օրենքով պահանջվում է, որ համալսարաններում «Հայոց լեզուն» և «Պատմությունը» դասավանդվեն որպես պարտադիր առարկաներ: Մեկ այլ՝ «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» օրենքով համալսարաններից պահանջվում է դասավանդել «Էկոլոգիա»: Բացի այդ, 2001թ. հունվարի «Բարձրագույն և մասնագիտական կրթության պետական չափորոշիչների մասին» Կառավարության N24 որոշմամբ բարձրագույն ուսումնական հաստատություններից պահանջվում է հիմնականում ընդունել կառավարության կողմից հաստատված կրթական չափորոշիչները, ուսումնական ծրագրերը և դասավանդման աշխատակարգերը:¹⁸

¹⁷ Օրինակ՝ Հայաստանում համալսարանների ինքնավարության մասին Եվրոպական համալսարանական ասոցիացիայի գնահատումը Հայաստանում ATHENA ծրագրի շրջանակներում մեծապես օգտակար է եղել: Տե՛ս՝ https://www.athena-tempus.eu/images/Armenia%20ATHENA%20analysis%20and%20roadmap_Final.pdf

¹⁸The World Bank. (2013). Addressing Governance at the Center of Higher Education Reforms in Armenia. pp. 23. Washington. DC.

Պետական համալսարանները չունեն ինքնավարություն ներկայացնելու նոր կրթական ծրագրեր, բայց կարող են չեղարկել գոյություն ունեցող ծրագրերը կառավարության հաստատմամբ: Համալսարանները կարող են առաջարկել միայն այնպիսի ծրագրեր, որոնք առկա են 2014թ. Հայաստանի կառավարության կողմից հավանության արժանացած մասնագիտությունների և որակավորումների ցանկում: Եթե աստիճան շնորհող մասնագիտության կրթական նոր ծրագրերը ցանկում ներառված չեն, ապա համալսարանը պետք է ստանա կառավարության հավանությունը այդ ծրագրերն առաջարկելու համար:

Պետական համալսարաններն ունեն ինքնավարություն իրենց հետաքրքրության շրջանակներում հետազոտություն անցկացնելու, սակայն անցյալում եղել են դեպքեր, երբ մի քանի հասարակագիտական հետազոտական նախագծեր չեն արժանացել հավանության քաղաքական պատճառներով: Օրինակ ասպիրանտին խնդրել են բաց թողնել տնտեսագիտական իր ատենախոսությունից այն հատվածը, որը քննադատում էր կառավարության տնտեսական քաղաքականությունը:

Պետական համալսարանները ունեն ինքնավարություն՝ իրենց ծրագրերում պրակտիկաներ ներդնելու և հեռակա ուսանողների ընդունելության ընթացակարգի վերաբերյալ որոշումներ կայացնելու համար: Կառավարությունը խիստ քաղաքականություն և ընթացակարգ է սահմանել գործող ծրագրերի ընդունելության և դրանցում ընդգրկվելու համար: Պետական և մասնավոր համալսարաններում գործող ծրագրի բոլոր դիմորդները հանձնում են միասնական ընդունելության քննություն, որն անցկացվում է Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից: Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (ԿԳՄՄՆ) որոշում է՝ արդյոք դիմորդն իրավասու է ընդգրկվել տվյալ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունում և կրթական ծրագրում: Համալսարանները ազատ են սահմանելու հեռակա ծրագրերի ընդունելության պահանջները:¹⁹

Այնուամենայնիվ, համալսարանները լիովին ինքնավար չեն ամեն տարի ընդունվող ուսանողների քանակը որոշելիս: Բոլոր պետական և մասնավոր համալսարանները հաստատման համար Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանն են ուղարկում իրենց պետպատվեր և վճարովի համակարգերի ուսանողների տեղերի քանակը աստիճան շնորհող մասնագիտության կրթական յուրաքանչյուր ծրագրի համար: Պետությունը ֆինանսավորում է տրամադրում է պետական, մասնավոր և միջպետական համալսարաններում նախատեսված սահմանափակ տեղերի համար: Ընդունվող ուսանողների քանակը սահմանվում է կառավարության և համալսարանի միջև կնքված լիցենզավորման համաձայնագրերով: Կառավարությունը ֆինանսավորում է փոքրաթիվ ուսանողների, բայց նույնիսկ վճարովի ուսանողների քանակը որոշվում է Կառավարության ֆինանսավորմամբ պետպատվերով սովորող ուսանողների թվի և ենթակառուցվածքներին ներկայացվող այնպիսի պահանջների հաշվառմամբ, ինչպիսիք են ռեսուրսները և ենթակառուցվածքային հնարավորությունները: Պետական ֆինանսավորումը չի ներառում կապիտալ/ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծախսերը:

¹⁹ The World Bank. (2013). Addressing Governance at the Center of Higher Education Reforms in Armenia. pp. 30. Washington. DC.

Հարկ է նշել, որ համալսարաններն ազատ են շնորհելու վկայականներ, բայց չունեն աստիճան շնորհելու ինքնավարություն: Համաձայն «Բարձրագույն կրթության և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի Կառավարությունն է սահմանում ամփոփիչ ատեստավորման պահանջների չափորոշիչները: Ամփոփիչ ատեստավորման նոր պահանջն այն է, որ ավարտական հանձնաժողովի անդամների 50 տոկոսը պետք է լինեն տվյալ համալսարանում չաշխատող մասնագետներ:

Անձնակազմի համալրման ինքնավարություն

«Բարձրագույն կրթության և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքը Բարձրագույն ուսումնական հաստատություններին զգալի մակարդակի ինքնավարություն է շնորհում է անձնակազմի համալրման հարցում: Բուհերը լիազորություն ունեն պրոֆեսորադասախոսական կազմին աշխատանքի ընդունել, պաշտոնը բարձրացնել և աշխատանքից ազատել, բայց Բարձրագույն ուսումնական հաստատությունների մեծ մասը չեն կարող գործադրել այս ինքնավարությունը՝ մարդկային ռեսուրսներին վերաբերող ոչ արդյունավետ աշխատակարգերի պատճառով: Այսպիսի անարդյունավետ աշխատակարգերից են հավաքագրման ոչ թափանցիկ գործընթացները, անձնակազմի կատարողականի գնահատման համակարգերի բացակայությունը, ինչպես նաև անձնակազմի և նրանց բեռնվածության միջև անհամապատասխանությունը: Օրինակ համալսարանների մեծ մասը ունի փաստացի կարիքը գերազանցող թվով վարչական անձնակազմ:

Համաձայն շահակիցների հետ հարցազրույցների չնայած աշխատավարձերը սահմանելու և պարզևավճարներ տրամադրելու հարցերում ունեցած ինքնավարությանը, համալսարանների մեծ մասը գործնականում չեն կիրարկում այն՝ ռեսուրսների պակասի պատճառով: Շատ անգամ համալսարանները աշխատանքի են ընդունում դասախոսական կազմին պայմանագրային հիմունքով՝ սուղ բյուջեում տեղավորվելու համար:

Կառավարման ինքնավարություն

Կառավարման ինքնավարությունը սահմանափակվել է պետական համալսարաններում, քանի որ պետական իշխանությունների կողմից լուրջ քաղաքական ազդեցություն էր նկատվում: Բարձրաստիճան պետական պաշտոնյաներն ընդգրկում էին համալսարանի կառավարական մարմիններում, ինչը թուլացնում էր պետական համալսարանների ինքնավարությունը: Օրինակ պետական համալսարանների խորհուրդները նախագահում էին երկրի բարձրագույն քաղաքական առաջնորդները, իսկ նախարարները, մարզպետները և քաղաքապետները ընդգրկված էին խորհուրդների կազմում: Համաձայն պետական համալսարանների խորհուրդների ստեղծման մասին կանոնակարգի խորհրդի անդամների 25%-ը և նշանակվող պետական պաշտոնյաներ են, 25%-ը՝ կրթության, գիտության, մշակույթի և բիզնեսի ոլորտները հայտնի գործիչներ, 25%-ը՝ ուսանողության ներկայացուցիչներ և 25%-ը՝ համալսարանի աշխատակազմի ներկայացուցիչներ: Հոգաբարձուների խորհրդի կազմը հաստատում է վարչապետը: Իրավիճակը փոխվել է հեղափոխությունից հետո: Նախագահը, վարչապետը, Ազգային ժողովի նախագահը և նախարարները այլևս ներկայացված չեն խորհուրդներում, բայց խորհուրդների կազմում դեռ ներկայացված են մարզպետներ, ԱԺ պատգամավորներ և փոխնախարարներ: Հոգաբարձուների մի քանի խորհուրդներ, որոնց նոր

կազմը հաստատվել է, արդեն անցկացրել են ժողովներ, և քվեարկության գործընթացները հիմա ժողովրդավարական են: Կան որոշ դեպքեր, երբ խորհրդի անդամների կողմից քվեարկությունը վերաբերել է մրցույթի մասնակցող մի քանի թեկնածուների:²⁰

Պետական համալսարանները չունեն ինքնավարություն փոխելու ղեկավար կազմի նշանակման ընթացակարգը: Պետական բարձրագույն ուսումնական հաստատության ռեկտորը ընտրվում է բաց մրցույթով, ինչպես նախատեսվում է «Բարձրագույն կրթության և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքով և բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ: Ընտրությունները տեղի են ունենում բարձրագույն ուսումնական հաստատության Հոգաբարձուների խորհրդում՝ գաղտնի քվեարկությամբ, իսկ պաշտոնը տեղակալվում է 5 տարի ժամկետով: Մինևույն անձնավորությունը չի կարող ընտրվել նույն բարձրագույն ուսումնական հաստատության ռեկտորի պաշտոնում երկու ժամկետից ավելի: Ռեկտորի ընտրության վերջնարդյունքը հաստատվում է Հայաստանի կառավարության նիստի ժամանակ՝ վարչապետի, փոխվարչապետների և նախարարների մասնակցությամբ: Պաշտոնակալման հաստատումը ստանալու համար թեկնածուն պետք է հավաքած լինի Հոգաբարձուների խորհրդի ձայների երկու երրորդը: Եթե ռեկտորը չի հաստատվում կառավարության կողմից, նոր ընտրություններ են տեղի ունենում, և ընթացակարգը կրկնվում է:

Գոյություն ունեն մի շարք իրավական անհամապատասխանություններ ղեկավար մարմնի նշանակմանը վերաբերող փաստաթղթերում: Գործընթացը կարգավորվում է չորս տարբեր փաստաթղթերով, իսկ դրանք համաձայնեցված չեն: Այդ փաստաթղթերն են «Բարձրագույն կրթության և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքը, «Հիմնադրամների մասին» օրենքը, «Խորհրդի ձևավորման կարգը» և «Հոգաբարձուների խորհրդի կանոնադրությունը»: Տարբեր օրենքների և ընթացակարգերի միջև գոյություն ունեցող անհամապատասխանությունները շփոթություն են առաջ բերել և կա համապատասխանեցման անհրաժեշտություն:

Ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը որպես համալսարանների կառավարման կառուցվածքների մաս սահմանվում է «Բարձրագույն կրթության և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում և պետական համալսարանների խորհուրդներ ստեղծելու մասին կառավարության կողմից հաստատված կարգում:

Ֆինանսական ինքնավարություն

Պետական համալսարաններն ունեն զգալի ֆինանսական ինքնավարություն թղթի վրա, բայց իրականում կան որոշ սահմանափակումներ իրարամերժ կանոնակարգերի պատճառով: Մի կողմից «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքը համալսարաններին տալիս է ինքնավարություն ուսման վարձեր սահմանելու համար, բայց մյուս կողմից Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը սահմանում է ուսման վարձերի առավելագույն շեմ: Այս կանոնակարգն ընդունվել է Հայաստան Հանրապետության կառավարության կողմից 2015թ.: Գոյություն ունի ուսման վարձերի առավելագույն շեմը

²⁰ Նման բան տեղի է ունեցել Շիրակի պետական համալսարանում, Երևանի պետական համալսարանում և Երևանի պետական բժշկական համալսարանում:

սահմանող բանաձև: Կան սահմանափակումներ համալսարանների կողմից գումար ներդնելու և սեփականություն ունենալու և վաճառելու իրավունքի վրա: Հիմնադրամ համարվող համալսարանները ունեն նման ինքնավարություն, բայց համալսարանները, որոնք պետական ոչ առևտրային կազմակերպություններ են, ունեն սահմանափակումներ համաձայն ՊՈԱԿ-ների մասին օրենքի: Բացի այդ, եթե ակտիվները, օրինակ՝ շենք-շինությունները, պատկանում են պետությանը, ապա այդ ակտիվներից ստացված եկամուտը փոխանցվում է պետությանը: ՊՈԱԿ-ների մասին օրենքը նաև սահմանափակում է պետական համալսարանների կողմից սեփական ակտիվների օգտագործումը գրավի տեսքով և հանձնարարում է համալսարաններին ստանալ ԿԳՄՄՆ-ի թույլտվությունը օրենքով սահմանված կարգից ավելի արժեքող սեփականություն ձեռք բերելիս:²¹

Մասնավոր համալսարաններ

Կայացած ●●●○

Մասնավոր համալսարանները ակադեմիական և անձնակազմին վերաբերող հարցերում իրացնում են ինքնավարության նույն մակարդակը, ինչ իրենց պետական հատվածի գործընկերները, բայց նրանք ավելի ինքնավար են, քան պետական համալսարանները, երբ խոսքը գնում է կառավարման և ֆինանսական հարցերի մասին: Այս նմանությունները և տարբերությունները բացատրված են ստորև.

Ակադեմիական ինքնավարություն

Պետական և մասնավոր համալսարանները նման են իրացվող ակադեմիական ինքնավարության մակարդակով: Երկուսն էլ պարտավոր են հետևել կրթական չափորոշիչներին, ուսումնական ծրագրին և դասավանդման աշխատակարգերին, ինչը սահմանված է Կառավարության N 24 որոշմամբ և «Կրթության մասին» ՀՀ օրենքով, բայց նրանք ազատ կարող են ներդնել պրակտիկաներ և գործնական ուսուցումներ իրենց ծրագրերում, սահմանել ակադեմիական ստորաբաժանումները, չեղարկել աստիճան շնորհող կրթական ծրագրերը և իրականացնել հետազոտություններ իրենց հետաքրքրության շրջանակում: Այնուամենայնիվ, իրականում ծավալուն հետազոտություն տեղի չի ունենում ռեսուրսների պակասի պատճառով: Ինչպես և պետական համալսարանների դեպքում, մասնավոր համալսարանները չեն կարող ազատ ներկայացնել նոր աստիճանաշնորհման կրթական ծրագրեր, մշակել ընդունելության ծրագրեր առկա համակարգում սովորող ուսանողների համար և շնորհել աստիճաններ:

Անձնակազմի համալրման ինքնավարություն

Մասնավոր համալսարանները նման են պետական համալսարաններին անձնակազմի համալրման ինքնավարության հարցում, բացառությամբ մի քանի փոքր տարբերությունների: Մասնավոր համալսարանների թափուր աշխատատեղերի մեծ մասը հանրայնորեն չի հրապարակվում: Աշխատանքի ընդունման ընթացակարգի համար չկան պարտադիր

²¹The World Bank. (2013). Addressing Governance at the Center of Higher Education Reforms in Armenia. pp. 33. Washington. DC.

պահանջներ: Ինչպես պետական համալսարաններում, նրանք կարող են դասախոսական և ոչ-դասախոսական կազմին ընդունել աշխատանքի, բարձրացնել պաշտոնը և ազատել աշխատանքից: Չնայած մասնավոր համալսարաններին տրված է ինքնավարություն աշխատանք ընդունման ժամանակ, այս ինքնավարությունը վտանգվում է աշխատանքի ընդունման արժանիքի վրա չհիմնված աշխատակարգերի կիրառման պատճառով: Օրինակ եղել են դեպքեր, երբ կառավարությունը և այլ ազդեցիկ անձնավորություններ միջամտել են աշխատանքի ընդունման գործընթացին խնդրելով համալսարաններին աշխատանքի ընդունել իրենց նախընտրած թեկնածուներին: Պետական համալսարանների նման, մասնավոր համալսարանները նույնպես ունեն ինքնավարություն սահմանելու աշխատավարձեր և տրամադրելու պարգևավճարներ իրենց աշխատակազմին, բայց գործնականում չեն կարողանում անել դա՝ ռեսուրսների պակասի պատճառով: Պետական և մասնավոր համալսարանների միջև հիմնական տարբերությունն այն է, որ մասնավոր համալսարանները ունեն ինքնավարություն պրոֆեսորադասախոսական կազմին տրամադրելու հաստիքային պաշտոններ, բայց երբեմն ընտանեվարությունը խաթարում է աշխատանքի ընդունման արժանիքների վրա հիմնված աշխատակարգերը:

Կառավարման ինքնավարություն

Մասնավոր համալսարանների և պետական համալսարանների միջև ամենամեծ տարբերությունը կառավարման ինքնավարության ոլորտում է: Մասնավոր համալսարաններն ունեն ինքնավարություն ընտրելու ղեկավար մարմին, բայց հիմնականում համալսարանի սեփականատերն է զբաղեցնում բարձրագույն ղեկավար պաշտոնը, և այդպիսով ղեկավարման ժամկետի ավարտը դառնում է խնդիր: Համալսարանների ռեկտորներին հիմնականում նշանակում են Հիմնադիրների խորհուրդները առանց ժամկետային սահմանափակման, ռեկտորները զգալի ազդեցություն են ունենում իրենց ղեկավարած համալսարանների՝ կառավարմանն վերաբերող որոշումների կայացման հարցում: Հաստատության ղեկավարը կամ ռեկտորները սովորաբար ղեկավարում են համալսարանը իրենց կողմից ընտրված անձնակազմի նեղ շրջանակի հետ միասին:

Ի տարբերություն պետական համալսարանների մասնավոր համալսարանները ունեն ինքնավարություն՝ որոշելու իրենց ղեկավար մարմնի ընտրության ընթացակարգը և ներգրավում են ներքին և արտաքին շահակիցներին կառավարման մարմիններում, բայց գործնականում սովորաբար ոչ մի մրցութային գործընթաց տեղի չի ունենում համալսարանի կառավարման մարմնի ընտրության համար, իսկ դասախոսների և ուսանողների ներկայացվածությունը համալսարանի կառավարման մարմիններում սահմանափակ է:²² Մասնավոր համալսարանների ռեկտորների ընտրության ընթացակարգը տարբերվում է համալսարանից համալսարան: Որոշ դեպքերում ռեկտորներն ընտրվում են կառավարական մարմինների կողմից, իսկ այլ դեպքերում համալսարանների հիմնադիրներն են ստանձնում ռեկտորի պաշտոնը: Համալսարանները չեն ապահովում ռեկտորների ընտրության գործընթացի հրապարակայնությունը:

²²The World Bank. (2013). Addressing Governance at the Center of Higher Education Reforms in Armenia. pp. 29. Washington. DC.

Ֆինանսական ինքնավարություն

Հիմնականում մասնավոր բուհերը չեն ստանում ֆինանսավորում ոչ-հետազոտական աշխատանքների համար՝ բացառությամբ երկու համալսարանների (Գլաձորի համալսարան և Հյուսիսային համալսարան), որոնք ֆինանսավորվում են պետական բյուջեից, յուրաքանչյուրը՝ երկու ուսանողի համար: Պետպատվեր համակարգում ուսանողների թիվը կարող է փոխվել ամեն տարի: Այդ թվաքանակի որոշման համար հստակ չափանիշներ չկան: Ամեն տարի Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը սահմանում է պետության կողմից ֆինանսավորում ստացող ուսանողների թիվը: Բացի այդ, մասնավոր բուհերը իրավասու են մասնակցել և ֆինանսավորում ստանալ Նորարարությունների մրցակցային հիմնադրամի կողմից: Մասնավոր բուհերը, ի տարբերություն պետական բուհերի, ունեն ֆինանսական ավելի մեծ ինքնավարություն: Ի տարբերություն պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների՝ նրանք կարող են գումար փոխառել, ունենալ հող և շենքեր, վաճառել դրանք և մատուցել պայմանագրային ծառայություններ՝ եկամուտ հետապնդելով: Մասնավոր բուհերը նրանով են պետական բուհերին, որ կարող են կուտակել պահուստները և ունեն ֆինանսական ինքնավարություն գումարը ֆինանսական կամ ֆիզիկական ակտիվներում ներդնելու հարցում:

Միջպետական համալսարաններ Առաջանցիկ մակարդակ ●●●●

Միջպետական հաստատությունները, ինչպիսիք են Հայաստանի ամերիկյան համալսարանը, Հայաստանում ֆրանսիական համալսարանը, և Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանը, ունեն նույն մակարդակի ինքնավարություն, ինչ մասնավոր հաստատությունները՝ բացառությամբ ակադեմիական որոշումների կայացման գործընթացի, որում վերջիններս մի փոքր ավելի ազատ են, քան իրենց մասնավոր կամ պետական գործընկեր-հաստատությունները: Ստորև ներկայացվում են միջպետական և պետական ու մասնավոր հաստատություններին տրամադրվող ինքնավարության տարբեր տեսակների միջև առկա նմանությունները և տարբերությունները.

Ակադեմիական ինքնավարություն

Միջպետական հաստատություններն օժտված են ավելի մեծ ակադեմիական ինքնավարությամբ, քան պետական և մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատությունները: Ի տարբերություն պետական և մասնավոր համալսարանների՝ վերջիններս կարող են մշակել իրենց սեփական ուսումնական ծրագիրը, բայց նաև պարտավոր են դասավանդել «Հայոց լեզու» և «Հայոց պատմություն» առարկաները առնվազն երկու կիսամյակ:

Երկրում գործող այլ բարձրագույն ուսումնական հաստատությունների նման միջպետական բուհերը չունեն ինքնավարություն աստիճան շնորհող նոր ծրագրերի ներդրման հարցում, սակայն կարող են սեփական կամքով չեղարկել ծրագրերը: Նոր ծրագրեր կարող են ներդրվել միայն այն դեպքում, եթե դրանք ներառված են կառավարության կողմից հաստատված մասնագիտությունների և որակավորումների ցանկում: Բարձրագույն ուսումնական

հաստատություններին անհրաժեշտ է Կառավարության հաստատումը, եթե առաջարկվող ծրագիրը ներառված չէ ցանկում: Միջպետական բուհերն ունեն ինքնավարություն իրենց ուսանողների համար գործնական վերապատրաստումներ և պրակտիկ կազմակերպելու, ակադեմիական ստորաբաժանումները սահմանելու, ընդունելության ընթացակարգերը մշակելու և իրենց հետաքրքրող թեմաների շուրջ հետազոտություններ իրականացնելու գործում:

Անձնակազմի համայրման ինքնավարություն

Միջպետական բուհերը կարող են աշխատանքի ընդունել և խրախուսել պրոֆեսորադասախոսական կազմին, ունեն ինքնավարություն պրոֆեսորադասախոսական կազմին աշխատանքից ազատելու և նրանց աշխատավարձը սահմանելու հարցում: Նրանք կարող են աշխատանքի ընդունել, խրախուսել և աշխատանքից ազատել ոչ պրոֆեսորադասախոսական կազմին: Նրանք կարող են նաև ստեղծել նոր պրոֆեսորադասախոսական և ոչ ակադեմիական պաշտոններ, սահմանել աշխատավարձեր և առաջարկել պարգևավճարներ, սակայն ռեսուրսների պակասը կարող է խոչընդոտ հանդիսանալ այս տիպի ինքնավարության իրացման համար:

Կառավարման ինքնավարություն

Ինչպես մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատությունները, այնպես էլ միջպետական բուհերն ունեն կառավարման էական ինքնավարություն: Նրանք կարող են նշանակել ղեկավար կազմին և դադարեցնել դրա գործունեությունը, ինչպես նաև մշակել ղեկավարության նշանակման և գործունեության դադարեցման սեփական ընթացակարգերը: Ինչպես պետական համալսարանները, այնպես էլ միջպետական բուհերն ունեն կառավարման մարմիններ, իսկ ռեկտորներն ընտրվում են: Սակայն ի տարբերություն պետական բուհերի՝ վերջիններս ազատ են՝ որոշելու իրենց կառավարման մարմինների կազմը: Օրինակ՝ Հայաստանի ամերիկյան համալսարանում և Հայաստանում ֆրանսիական համալսարանում ուսանողները ներկայացված չեն կառավարման խորհրդում: Խորհուրդը կազմված է տարբեր հայտնի ակադեմիկոսներից, գործարարներից և հասարակական գործիչներից: Միջպետական հաստատությունները նաև ազատ են՝ փոխելու իրենց առաքելությունը և կառավարման մարմիններում ներգրավելու ներքին ու արտաքին շահակիցներին:

Հայաստանի ամերիկյան համալսարանը (ՀԱՀ) կարող է ունենալ յոթից ոչ պակաս կամ քսանհինգից ոչ ավել հոգաբարձուներ: Համալսարանի նախագահը պետք է լինի ՀԱՀ-ի կորպորացիայի հոգաբարձու ի պաշտոնե և օժտված լինի հոգաբարձուի բոլոր լիազորություններով: Խորհուրդը նշանակվում է 4 տարի ժամկետով այնպես, որ ամեն տարի առնվազն 1 թափուր տեղ է լինում հոգաբարձուների խորհրդում, սակայն որևէ տարում խորհրդի լիազորված տեղերի 1/3+1-ից ավել տեղ չի մնում թափուր: Համալսարանի նախագահն ընտրվում է հոգաբարձուների կողմից. ժամկետային սահմանափակումներ չկան:

Ֆինանսական ինքնավարություն

Ինչպես մասնավոր, այնպես էլ միջպետական բուհերին տրված է լայն ֆինանսական ինքնավարություն: Նրանք կարող են սահմանել իրենց ուսման վարձավճարների չափը, կուտակել պահուստները, փոխառել գումար, ներդրումներ կատարել ակտիվներում, ունենալ սեփական գույք և առաջարկել պայմանագրային ծառայություններ: Միջպետական հաստատությունները ստանում են փոքր ծավալի ֆինանսավորում պետական բյուջից

պետպատվերով սովորող ուսանողների համար: Այս գումարը ներառում է ուսման վարձի գեղչերը, որոնք յուրաքանչյուր համալսարանում մի քանի ուսանողի համար են նախատեսված (2-12 ուսանող): Այս բուհերն իրավասու են նաև դիմելու ՆՄՀ-ի ֆինանսավորման համար, եթե վերջիններիս միջազգային հավատարմագրումը ճանաչված է և գրանցված տեղական որակի ապահովման գործակալության՝ ՈԱԱԿ-ի կողմից: Մասնավոր համալսարանները նույնպես կարող են դիմել ՆՄՀ-ի ֆինանսավորում ստանալու համար: Վերջին տարիներին ՆՄՀ-ի կողմից դրամաշնորհային ֆինանսավորում ստացող տասնհինգ բուհերից երկուսը եղել են մասնավոր բուհեր: Միջպետական մեկ համալսարան՝ Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանը, որի միջազգային հավատարմագրումը ճանաչված է տեղական մակարդակով, ստացավ ՆՄՀ-ի կողմից ֆինանսավորում:

2.3 Քաղաքականության լծակ. Լավ ինստիտուցիոնալ կառավարման խթանում Զարգացող ●●○○

Լավ ինստիտուցիոնալ կառավարման խթանումը դիտարկվում է երեք հարցադրումներով. (1) Արդյո՞ք կարգավորման շրջանակը խրախուսում է թափանցիկ կառավարման աշխատակարգի զարգացումը ինստիտուցիոնալ մակարդակում: (2) Արդյո՞ք կարգավորման շրջանակն աջակցում է մարդկային ռեսուրսների՝ թափանցիկ և արժանիքների վրա հիմնված ծառայություններին: (3) Արդյո՞ք կարգավորման շրջանակը խրախուսում է հորիզոնական կառավարման աշխատակարգը ինստիտուցիոնալ մակարդակում:

Թափանցիկ ինստիտուցիոնալ աշխատակարգի խթանում կառավարման մակարդակում

Կարգավորման շրջանակը ներառում է մի շարք դրույթներ բարձրագույն ուսումնական հաստատությունների թափանցիկ կառավարման աշխատակարգի բարելավման համար: Պետական բարձրագույն ուսումնական հաստատություններն արտոնագրված են անցկացնելու արտաքին աուդիտ՝ համաձայն «Հիմնադրամների մասին» օրենքի և բուհերի կանոնադրությունների: Հոգաբարձուների խորհուրդը պատասխանատու է աուդիտորական կազմակերպությունների ընտրության համար:

Ներքին աուդիտների անցակցումը պարտադիր չէ: Համաձայն «Հիմնադրամների մասին» օրենքի պահանջի՝ աուդիտի հաշվետվությունը պետք է հրապարակվի, որին և հետևում են բուհերը: Պետական համալսարանները պետք է հրապարակեն իրենց բյուջեն և բոլոր ակտիվները, բայց ոչ բոլորն են բավարարում այս պահանջը: Կայքերում ֆինանսական տվյալների ներկայացման մշտադիտարկում չի իրականացվում: Պետական բուհերը հրապարակում են իրենց ֆինանսական հաշվետվությունները և խորհրդի նիստերի արձանագրությունները: Այս պայմանները չեն վերաբերում մասնավոր բուհերին և միջպետական բուհերին: Վերջիններս ընդհանուր առմամբ չեն հրապարակում իրենց ֆինանսական փաստաթղթերը: Որոշ մասնավոր և արտասահմանյան հաստատություններ հրապարակում են որոշ ֆինանսական տվյալներ, բայց այդ տվյալները սահմանափակ են:

Մարդկային ռեսուրսների՝ արժանիքների վրա հիմնված աշխատակարգի խրախուսում

Կարգավորման շրջանակը ներառում է որոշ դրույթներ ինստիտուցիոնալ մակարդակում

մարդկային ռեսուրսների՝ թափանցիկ աշխատակարգի խթանման համար: Այս դրույթները ներառում են աշխատանքի ընդունման արտոնագրված հրապարակային հայտարարությունները, սակայն այսպիսի հայտարարությունները հաճախ լայնորեն չեն տարածվում: Պետական հաստատությունները նաև պարտավոր են հրապարակել աշխատանքի ընդունման և խրախուսման իրենց չափանիշները: Աշխատանքի հայտարարությունները հրապարակվում են կայքերում կամ թերթում: Թեև թափուր հաստիքների մասին տեղեկությունը հրապարակվում է, այդ հաստիքների տեղակալման համար մրցութային ընթացակարգ չի գործում: Հիմնականում պաշտոնը զբաղեցնող անձին հրավիրում են հարցազրույցի և, վերջինս ընդունվում է աշխատանքի: Շատ դեկաններ և ամբիոնի վարիչներն են վերընտրվում են մի քանի անգամ: Նրանցից ոմանք զբաղեցնում են իրենց պաշտոնները ավելի քան 20 տարի: Այդ պաշտոնների համար տարիքային սահմանափակում չկա: Մասնավոր և միջպետական բուհերը պարտավոր չեն հետևել այս կարգերին: Նրանք ազատ են՝ հաստատելու աշխատանքի ընդունման իրենց գործընթացը: Այս բուհերի հետ կապված հիմնական մտահոգությունը այդ գործընթացների թափանցիկությունն ու արդարությունն է: Անհրաժեշտ է մշակել պաշտոնի անձնագրեր համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի անդամների համար:

Կարգավորման շրջանակը ներառում է նաև որոշ դրույթներ մարդկային ռեսուրսների՝ արժանիքների վրա հիմնված աշխատակարգի խրախուսման համար: Այս աշխատակարգը ենթադրում է, որ պրոֆեսորադասախոսական կազմն աշխատանքի է ընդունվում արժանիքների վրա հիմնված չափանիշներով, և վերջիններիս դասավանդումն ու հետազոտական աշխատանքը հետազոտական հաստատության դեպքում պարբերաբար գնահատվում են, սակայն այդ քաղաքականությունը լայնորեն չի կիրառվում: Մարդկային ռեսուրսների աշխատակարգը սահմանված է բուհերի կանոնադրություններով և ՈԱԱԿ-ի հավատարմագրման սկզբունքներով ու չափանիշներով: Որոշ բարձրագույն ուսումնական հաստատություններ խրախուսում են նաև իրենց պրոֆեսորադասախոսական կազմին դասավանդման գործունեության համար: Թեև այս քաղաքականությունը հաստատված է, պետական, մասնավոր կամ միջպետական հաստատությունները պարտավոր չեն հետևել դրան:

Համաձայն «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների եվ դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման մասին» կարգի՝ ինստիտուցիոնալ հավատարմագրման 5-րդ չափանիշը վերաբերում է պրոֆեսորադասախոսական կազմին և այլ աշխատողներին, և համաձայն այս չափանիշի՝ «ՄՈՒՀ-ի (մասնագիտական ուսումնական հաստատության) առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով»: Այս չափանիշը ենթադրում է 7 չափորոշիչներ, որոնք են.

- ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր,
- ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ,

- ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերական գնահատման համար
- Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ
- ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի՝ համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը,
- ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր,
- ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնասօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

Քաղաքացիական հասարակության փորձագետների շրջանում կան մտահոգություններ առ այն, որ Հայաստանի բարձրագույն կրթական համակարգում առկա չեն մարդկային ռեսուրսների թափանցիկ աշխատակարգ և չարաշահումներ են տեղ գտնում դասախոսական կարիերայի մեկնարկին, ինչպես նաև անձնակազմի խրախուսման ու աշխատանքից ազատման դեպքերում: Համաձայն շահակիցների հետ ունեցած հարցազրույցների՝ անձնակազմի աշխատանքի ընդունման, հեռացման և խրախուսման ընթացակարգերը խոցելի են, իսկ կադրային որոշումների վրա ազդում են ֆավորիտիզմի տարբեր ձևերը: Համաձայն 2016 թ. Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում բարեվարքության գնահատման՝ նշանակումները սովորաբար հիմնված են անձնական և քաղաքական կապերի վրա, կարճաժամկետ պայմանագրերի երկարաձգումը ավելի շատ հավատարմությանը, քան պրոֆեսիանալիզմի հիմքով է, իսկ աշխատանքային պայմանագրի խզումը կարող է կամայական հիմքեր ունենալ: Քաղաքական ազդեցությունը առկա է այս բոլոր գործընթացներում, հատկապես՝ բարձրաստիճան ղեկավար կազմի՝ ռեկտորների, պրոռեկտորների և ֆակուլտետների ղեկանների նշանակումներում:²³

Թափանցիկ հորիզոնական կառավարման աշխատակարգի խրախուսում

Կարգավորման շրջանակը ներառում է մի շարք դրույթներ, որոնք խրախուսում են բուհերին որդեգրել հորիզոնական կառավարման աշխատակարգ: «Բարձրագույն կրթության և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքը, «Պետական համալսարանների խորհուրդների ձևավորման մասին» կարգը և համալսարանների կանոնադրությունները կարգավորում են հորիզոնական կառավարման աշխատակարգերը, այդ թվում՝ բարձրագույն կրթության շահակիցների պահանջվող ընդգրկումը կառավարման մարմիններում, ուսանողական խորհուրդների ներգրավումը քաղաքականության մշակման գործընթացներում, արտոնագրված ժամկետները համալսարանների ղեկավարների համար և արտոնագրված գործընթացները բարձրագույն ուսումնական հաստատությունների ղեկավարների ժողովրդավարական ընտրության համար: Պետական բուհերն ունեն սահմանափակումներ հոգաբարձուների խորհրդի ձևավորման համար, սակայն մնացյալ դեպքերում բոլոր բուհերն ազատ են՝ որդեգրել հորիզոնական կառավարման աշխատակարգը:

²³ OSF-Armenia, 2016. Strengthening Integrity and Fighting Corruption in Education: Armenia, Yerevan: Open Society Foundations - Armenia.

Գործում են հաշվետվողականության մի շարք միջոցներ այն համալսարանների համար, որոնք չեն հետևում այս աշխատակարգին: Հաշվետվողականության այս միջոցները ենթադրում են, որ բարձրագույն ուսումնական հաստատությունները գնահատվում են այս քաղաքականության իրագործման համար, իսկ ղեկավարները հաշվետու են իրենց կառավարման աշխատակարգում թափանցիկության բացակայության համար: Ինստիտուցիոնալ հավատարմագրման 2-րդ չափանիշի համաձայն՝ հաստատությունը պետք է ընդունի կառավարման հետևյալ աշխատակարգերը.

- Հաստատության կառավարման համակարգն ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց՝ հաստատության առաքելությանը և նպատակներին համահունչ,
- ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցնելու իրենց առնչվող որոշումների կայացմանը:

Քաղաքականության ուղղություն 3: Ֆինանսավորում

Ընդհանուր գնահատականը՝ Զարգացող ●●○○

Համառոտ նկարագրություն. Պետական համալսարանների համար գործում է կայուն ֆինանսավորման մեխանիզմ: Այն թափանցիկ է, բայց համարվում է հնացած: Կատարողականի վրա հիմնված ֆինանսավորում ներկայումս չի իրականացվում, սակայն Կառավարությունը քննարկում է ֆինանսավորման այս ձևի ներդրման հարցը: Համալսարանները կարող են ստանալ որոշակի մրցակցային ֆինանսավորում հետազոտությունների և նորարարությունների համար:

Ֆինանսավորման մեխանիզմը դիտարկվում է երեք հարցադրումներով՝ 1) Արդյո՞ք երկրում կա բյուջեի բաշխման կայուն և թափանցիկ գործընթաց: (2) Արդյո՞ք գոյություն ունի հրապարակայնորեն հասանելի ֆինանսավորման բանաձև, որը ներառում է կատարողականի վրա հիմնված ֆինանսավորում, և արդյո՞ք պետական և մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատությունները կարող են բանակցել շահակիցների հետ կատարողականի թիրախների շուրջ: (3) Արդյո՞ք գոյություն ունի առնվազն մեկ ֆինանսավորման մրցակցային գիծ, որը հասանելի է բարձրագույն ուսումնական հաստատություններին նորարարությունների կամ այլ ազգային առաջնահերթությունների խրախուսման համար:

Բյուջետային հատկացումների կայուն և թափանցիկ գործընթաց

Պետական բուհերը սահմանափակ ֆինանսավորում են ստանում Կառավարությունից: Ֆինանսների նախարարությունը պատասխանատու է ֆինանսավորումը հաստատելու և այն Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը ուղղելու համար, որն էլ փոխանցում է ֆինանսավորումը համալսարաններին: Ֆինանսավորումը տրամադրվում է տարեկան միանվագ դրամաշնորհի տեսքով:²⁴ Ֆինանսավորման գործընթացը կայուն է, և համալսարանները կարող են բավարար վստահությամբ կանխատեսել ֆինանսավորման չափը: Սակայն պետական ֆինանսավորման ծավալը շատ փոքր է, և անգամ պետական բուհերը իրենց ֆինանսավորման միայն 15-20%-ն են ստանում պետական բյուջից (ինչը տարեկան կազմում է մոտ 25 մլն դոլար): Ստանալով սահմանափակ պետական ֆինանսավորում՝ բուհերը իրենց եկամուտի մեծ մասը ստանում են ուսման վարձերից, ինչը հանգեցնում է մատչելիության մասին մտահոգությունների: Հետևաբար, հայաստանյան բուհերի միջին բյուջեն բավականին փոքր է: Օրինակ՝ Երևանի պետական համալսարանի՝ երկրի մայր բուհի բյուջեն վերջին տարում կազմել է 8.7 մլրդ դրամ (\$ 18 մլն ԱՄՆ դոլար):

Հրապարակայնորեն հասանելի ֆինանսավորման հաշվարկի բանաձև

Կառավարությունը կիրառում է ֆինանսավորման չափի հաշվարկի բանաձև՝ համալսարաններին ֆինանսական միջոցների հատկացման համար, սակայն մանրամասները հստակ չեն: Ֆինանսավորման չափի հաշվարկի բանաձևը հանրությանը հասանելի չէ: Համաձայն շահակիցների հետ ունեցած հարցազրույցների՝ բանաձևը հաշվի է առնում ուսանողների, դասախոսների թիվը և համալսարանի տարածքը: Կատարողականի վրա

²⁴ European Commission. 2017. Overview of the Higher Education System: Armenia. https://eacea.ec.europa.eu/sites/eacea-site/files/countryfiches_armenia_2017.pdf

հիմնված ֆինանսավորումը և գործունեության հիմնական ցուցիչները ֆինանսավորման բաշխման մեխանիզմի մաս չեն կազմում, սակայն ներկայումս դիտարկվում են որպես ապագայում կիրառվելիք ֆինանսավորման գործիքներից մեկը: Ինչևէ, պարզ չէ, թե այդպիսի փոքր պետական բյուջեով ինչպիսի խթանիչ համակարգ կարող է ձևավորվել ոլորտի համար: Ֆինանսավորման առկա բանաձևը ենթակա է վերանայման մոտ ապագայում:

Մրցակցային ֆինանսավորում

Հայաստանի կառավարությունը տրամադրում է ֆինանսավորում հետազոտական և նորարարական կրթական աշխատակարգերի համար մրցակցային հիմունքներով: Օրինակ՝ Կառավարությունը ստեղծել է Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող Նորարարությունների մրցակցային հիմնադրամը (ՆՄՀ)՝ բարձրագույն կրթության ոլորտում նորարարությունների խթանման համար: Ծրագիրը հատկացնում է դրամաշնորհներ պետական և մասնավոր բուհերին՝ մրցակցային հիմունքներով նորարարական զարգացման ծրագրերի համար:²⁵ ՆՄՀ-ի ֆինանսավորման աղբյուրներն են՝

- (I) Կոնսորցիումային ծրագրեր, որոնք միավորում են պետական և մասնավոր բուհերին, մասնավոր և այլ ընկերություններին, ինչպես նաև հետազոտական հաստատություններին, և դրամաշնորհի առավելագույն չափը կազմում է մինչև 600,000 ԱՄՆ դոլար,
- (II) Պետական և մասնավոր համալսարաններին ուղղված ծրագրեր, որոնք թիրախավորում են հատուկ զարգացման և նորարարությունների հիմնախնդիրները առանձին համալսարանների և դրանց մասնաճյուղերի համար՝ հաշվի առնելով կրթության ոլորտում ռազմավարական զարգացման առաջնահերթությունները և նորարարական լուծումները, իսկ դրամաշնորհի առավելագույն չափը կազմում է 300,000 ԱՄՆ դոլար յուրաքանչյուր ծրագրի համար:

ՆՄՀ-ի շրջանակներում ֆինանսավորվող մի շարք ծրագրերից են ատամնաբուժության գերազանցության կենտրոնի ստեղծումը, գիտական հետազոտությունների կատարելագործումը և գինեգործական կրթության իրականացումը, մանրէաբանական կենսաստեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոնի ստեղծում, ճարտարապետական և շինարարական մասնագիտությունների համար կրթական ծրագրերի կատարելագործումը կրթական հետազոտությունների փորձարարական լաբորատորիայի ստեղծման միջոցով, նորարարական ակուստիկ լաբորատորիայի ստեղծումը, նախադպրոցական և տարրական կրթության արդիականացումը և այլն: Համալսարանները կարող են նաև ստանալ ֆինանսավորում պետական բյուջեից իրենց գիտական հաստատությունների և լաբորատորիաների համար մրցակցության միջոցով: Այս ֆինանսավորումը տրամադրվում է Գիտության պետական կոմիտեի կողմից: Վերջինս նաև տրամադրում է ֆինանսավորում մինչև 35 տարեկան երիտասարդ գիտնականների առաջարկած խմբային ծրագրերի համար: Ֆինանսավորման ոլորտները ներառում են STEM (բնագիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն, մաթեմատիկա) ոլորտի գիտակարգերը, ճարտարապետությունը, գյուղատնտեսությունը, բժշկությունը, հասարակական գիտությունները և հայագիտությունը:

²⁵ European Commission. 2017. Overview of the Higher Education System: Armenia. https://eacea.ec.europa.eu/sites/eacea-site/files/countryfiches_armenia_2017.pdf

Քաղաքականության ուղղություն 4: Որակի ապահովում Ընդհանուր գնահատականը՝ Կայացած ●●●○

Համառոտ նկարագրություն. Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը (ՈԱԱԿ) Հայաստանում բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունն է: Այս պահի դրությամբ ՈԱԱԿ-ն ընդգրկել է պետական ոլորտը, սակայն երկրում մասնավոր և միջպետական հաստատությունների մեծ մասը դեռևս չի հավատարմագրվել գործակալության կողմից: Ներկայումս Հայաստանում բարձրագույն ուսումնական հաստատությունները կարող են հավատարմագրվել ցանկացած հավատարմագրման գործակալության կողմից, որն անդամակցում է ՈԱԵԳ-ին (EQAR) և ՈԱԵՑ-ին (ENQA): ՈԱԱԿ-ը մշակել է որակի ապահովման չափանիշներ և չափորոշիչներ, սակայն դրանք դեռևս ամբողջությամբ չեն գործում: Հավատարմագրման չափանիշներին անհամապատասխանությունը հանգեցնում է որոշ հետևանքների, բայց դրանք հիմնականում կիրառելի են պետական բուհերի համար: Բացի այդ, երկրում կան մի քանի միջպետական բուհեր, որոնք գործում են առանց հավատարմագրման:

Որակի ապահովման համակարգը բարձրագույն կրթության երկու հատվածներում վերլուծվում է չորս հարցադրումների միջոցով: (1) Արդյո՞ք երկրում գործում է որակի ապահովման անկախ գործակալություն, և արդյո՞ք վերջինս արդյունավետորեն է գործարկում է իր չափանիշներն ու չափորոշիչները: (2) Արդյո՞ք այն մշակել է ինստիտուցիոնալ և ծրագրային որակի չափանիշներ: (3) Արդյո՞ք բարձրագույն ուսումնական հաստատություններն ունեն իրենց կառավարման տեղեկատվական համակարգեր ստեղծելու համար: (4) Արդյո՞ք կարող են ի հայտ գալ հետևանքներ այն հաստատությունների համար, որոնք չեն համապատասխանում գնահատման կամ հավատարմագրման չափանիշներին:

Որակի ապահովման անկախ գործակալության առկայություն

Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը (ՈԱԱԿ) հիմնադրվել է 2009թ. Հայաստանում տեղի ունեցող բարձրագույն կրթության բարեփոխումների շրջանակում: Այս գործակալության հիմնական նպատակն է «անցկացնել ուսումնասիրություններ, հետազոտություններ և հրապարակել բարձրագույն կրթության ոլորտին վերաբերող խորհրդատվություններ և գնահատումներ»: ՀՀ-ում գործող բոլոր պետական և մասնավոր բուհերը պարտադիր պետք է լիցենզավորվեն Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից: Համալսարանները պետք է նաև ձեռք բերեն հավատարմագրում ՈԱԱԿ-ի կամ այլ հավատարմագրման գործակալությունների կողմից, որոնք անդամակցում են ՈԱԵԳ-ին և ՈԱԵՑ-ին:

Հիմնադրման օրվանից ի վեր ՈԱԱԿ-ը ձգտում է հասնել որակի ապահովման միջազգային չափորոշիչներին: Այն հանդիսանում է Միջազգային կրթության որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանցի (INQUAAHE) և Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ցանցի (ENQA) լիիրավ անդամ: 2017թ. (5 տարով) ՈԱԱԿ-ը նաև ընդգրկվել է Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական գրանցամատյանում (ՈԱԵԳ):

Իր կանոնադրության համաձայն՝ ՈԱԱԿ-ը ղեկավարվում է Հոգաբարձուների խորհրդի

կողմից, և Խորհրդի 12 անդամներից երկուսը կառավարության ներկայացուցիչներ են: Չնայած խորհրդի նախագահն ընտրվում է հոգաբարձուների խորհրդի կողմից, խորհրդի բոլոր անդամները հաստատվում են Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից: Թեև ՈԱԱԿ-ը ստեղծվել է որպես անկախ գործակալություն, վարչապետի կողմից խորհրդի անդամների հաստատումը որոշակիորեն խաթարում է այդ ինքնավարությունը:²⁶

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը պարտադիր է, բայց ծրագրային հավատարմագրումը կատարվում է կամավոր հիմունքներով և ձեռք է բերվում միայն ինստիտուցիոնալ հավատարմագրումից հետո: Եվ՝ ինստիտուցիոնալ, և՛ կրթական ծրագրերի հավատարմագրումները իրականացվում են հետևյալ երեք հաջորդական փուլերի արդյունքում.

- **Առաջին փուլ.** Ինքնավերլուծություն (հաստատության ներքին ինքնագնահատման գրավոր զեկույց), որն իրականացվում է ուսումնական հաստատության կողմից;
- **Երկրորդ փուլ.** Փորձագիտական այց անկախ արտաքին փորձագետների խմբի կողմից;
- **Երրորդ փուլ.** Որոշման կայացում ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովի կողմից հավատարմագրման կարգավիճակ շնորհելու կամ մերժելու վերաբերյալ:

Որոշումը կայացվում է հավատարմագրման կարգավիճակ շնորհելու վերաբերյալ, որը կարող է ներկայացվել հետևյալ կերպ.

- Հավատարմագրված է – համապատասխանում է և գերազանցում է չափանիշների նվազագույն պահանջները;
- Պայմանականորեն է հավատարմագրված – համապատասխանում է նվազագույն պահանջներին, սակայն ունի հետագա վերամշակումների և զարգացման կարիք, որոնք հնարավոր է ձեռք բերել երկու տարվա ընթացքում;
- Հավատարմագրումը մերժվել է – չի համապատասխանում նվազագույն պահանջներին և չի կարող ապահովել այդ պահանջների բավարարումը երկու տարվա ընթացքում:

Մասնավոր և միջպետական բուհերի մեծ մասը դեռևս չի հավատարմագրվել: Հայաստանի ամերիկյան համալսարանը չի հավատարմագրվել ՈԱԱԿ-ի կողմից, սակայն հավատարմագրվել է մեկ այլ կազմակերպության կողմից, որը հանդիսանում է ՈԱԵԳ-ի և ՈԱԵՅ-ի անդամ: Դա իրավական հիմքեր ունի, քանի որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թ. հունիսի 30-ի N 978-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգը թույլ է տալիս Հայաստանի բուհերին ընտրել ՈԱԱԿ-ին կամ ցանկացած այլ կազմակերպություն, որն անդամակցում է ՈԱԵԳ-ին կամ ՈԱԵՅ-ին: Հայաստանում ֆրանսիական համալսարանը ՈԱԱԿ-ի կողմից հավատարմագրման հայտ ներկայացնելու գործընթացի մեջ է: Նույնիսկ եթե ՈԱԱԿ-ը մերժում է հաստատության հավատարմագրումը կամ շնորհում է պայմանական հավատարմագրում, այդ հաստատությունը կարող է գործել

²⁶ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կանոնադրություն 2008թ. <http://www.anqa.am/en/about-us/mission/anqa-charter/>

Հայաստանում, սակայն կրթական աստիճանները չեն ճանաչվում կառավարության կամ այլ բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից:

Ինստիտուցիոնալ և մասնագիտության կրթական ծրագրերի որակի չափանիշներ

ՈԱԱԿ-ը մշակել է ինստիտուցիոնալ որակի չափանիշներ, որոնք հիմնականում կենտրոնանում են ներդրումների, գործընթացների և արդյունքների համակցության վրա, սակայն այդ չափանիշները լիարժեքորեն չեն կիրառվում: Փորձագետների կարծիքով, եթե չափանիշները և չափորոշիչները խիստ և լիովին կիրառվեն, ապա մի շարք համալսարաններ չեն ստանա հավատարմագրում: Սակայն «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգը թույլ է տալիս ՈԱԱԿ-ին հավատարմագրել համալսարանը 4 տարի ժամկետով, եթե ռիսկերը մեծ չեն, և համալսարանը կարող է փոխել իրավիճակը 4 տարվա ընթացքում: Գործում է նաև պայմանական հավատարմագրում 2 տարի ժամկետով: Առաջին փուլում բուհերը անցկացնում են ինքնավերլուծություն հետևյալ 10 չափանիշների հիման վրա՝

1. Առաքելությունը և նպատակները,
2. Կառավարում և վարչարարություն,
3. Մասնագիտության կրթական ծրագրեր,
4. Ուսանողներ,
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ,
6. Հետազոտություն և զարգացում,
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ,
8. Հասարակական պատասխանատվություն,
9. Արտաքին կապեր և միջազգայնացում,
10. Որակի ներքին ապահովման համակարգ:²⁷

Կառավարման տեղեկատվական համակարգի ստեղծման խթաններ

Հայաստանում չկա լիարժեք գործող բարձրագույն կրթության կառավարման տեղեկատվական համակարգ, և ՈԱԱԿ-ը չի խթանում բուհերին կիրառել այդ համակարգը: Սակայն ինքնագնահատման փուլում համալսարանները պետք է հավաքագրեն տվյալներ վերոնշյալ 10 չափանիշների վերաբերյալ:

Գնահատման/հավատարմագրման չափանիշներին անհամապատասխանության հետևանքները

Հետևանքներ են ի հայտ գալիս այն բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, որոնք չեն համապատասխանում ՈԱԱԿ-ի կողմից սահմանված գնահատման չափանիշներին: Թեև ասվածը վերաբերում է պետական համալսարաններին, միջպետական օտարերկրյա հաստատությունները կանգնում են մեծ խնդրի առջև առանց հավատարմագրման աշխատելու պատճառով: Երկրում բազմաթիվ բուհեր գտնվում են հավատարմագրման գործընթացում, սակայն շարունակում են գործունեությունը: Մեծ է Միջպետական բուհերի գործունեության շուրջ անորոշությունը:

²⁷ ՈԱԱԿ Հավատարմագրման ձեռնարկ, file:///C:/WB/HIGHER/GovDec959_eng_ANQA_accreditation_manual.pdf

Հավատարմագրման չափանիշներին չհամապատասխանող հաստատությունները իրավասու չեն ստանալ պետական ֆինանսավորում, և դրանց գնահատման արդյունքները հրապարակվում են: Նման հաստատությունները նաև իրավասու չեն շնորհել կրթական աստիճաններ և նույնիսկ կարող են փակվել ՈԱԱԿ-ի կողմից: Այնուամենայնիվ, այս հաստատությունները ենթակա են վերագնահատման և վերահավատարմագրման: Բարձրագույն ուսումնական հաստատությունները պարտավոր են վերահավատարմագրվել ամեն 4 կամ 6 տարին մեկ:

Քաղաքականության ուղղություն 5. Բարձրագույն կրթության կառավարման տեղեկատվական արդյունավետ համակարգ (TEMIS) Ընդհանուր գնահատականը՝ լատենտ ●○○○

Համառոտ նկարագրություն. Երկրում համալսարանների համար ազգային կամ տարածաշրջանային կառավարման տեղեկատվական համակարգ չկա, սակայն կառավարության աշխատակիցը նշել է, որ իրենք մշակել են TEMIS գործիք, որը կգործի 2019 թվականին: Այնուամենայնիվ, ներկայում որոշ համալսարաններ օգտագործում են կառավարման իրենց տեղեկատվական համակարգը տվյալների հավաքման համար:

Սույն ուղղությունից TEMIS-ի վերաբերյալ բխում են հետևյալ երկու հարցերը: (1) Կա՞րողոք ազգային կամ տարածաշրջանային կառավարման տեղեկատվական համակարգ ուսանողների, ֆակուլտետների և հետազոտությունների զարգացման և նորարարության վերաբերյալ բարձրագույն կրթության ոլորտի տվյալների հավաքման համար: (2) Այդ տվյալներն արդյոք օգտագործվո՞ւմ են համակարգի գնահատման և բարեփոխումների համար:

Կառավարման տեղեկատվական համակարգի առկայությունը

Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը (ԿՏԱԿ) մշակել է TEMIS մոդելը, որը մասամբ օգտագործվում է որոշ համալսարանների կողմից փորձարարական հիմունքներով: Չնայած ներկայում TEMIS-ը չի գործում երկրում, համաձայն նախարարության աշխատակիցների՝ այն պատրաստ է և կգործի 2019թ.: Որոշ համալսարաններ օգտագործում են կրթության կառավարման իրենց տեղեկատվական համակարգերը: Միննույն ժամանակ զարգացման մեկ այլ գործընկեր՝ Ասիական զարգացման բանկը, առաջարկում է բարելավել ԿԿՏՀ-ը՝ ներառելով կրթության բոլոր մակարդակները և տրամադրելով վերլուծական գործիքներ ապացուցահեն որոշումների կայացման համար:

Համակարգի գնահատման և բարեփոխումների համար TEMIS-ի տվյալների օգտագործումը

Քանի որ Հայաստանում բարձրագույն ուսումնական հաստատության համար ազգային կամ տարածաշրջանային մակարդակով TEMIS չկա, տվյալները չեն կարող համակարգված կերպով օգտագործվել քաղաքականության մշակման համար:

2009-2014թթ. Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ ծրագրի բաղադրիչներից մեկը եղել է բարձրագույն կրթության կառավարման տեղեկատվական արդյունավետ և ամբողջական համակարգի (TEMIS) ստեղծմանը աջակցելը՝ նպաստելու քաղաքականության պլանավորմանը, կառավարմանը, մշտադիտարկմանը և ազգային և համալսարանական մակարդակներում ոլորտի գործունեության գնահատմանը: TEMIS-ը պետք է օգտագործվեր՝ ԿԳՄՄՆ-ի կողմից բարձրագույն կրթության մասին տարեկան հաշվետվություններ մշակելու և բարձրագույն կրթության համար ՄԺԾԾ և տարեկան բյուջե կազմելու համար: Չնայած TEMIS-ը մշակվել և գործնականորեն հասանելի էր օգտագործման համար ծրագրի փակման ժամանակ, որևէ հանձնագիր կամ պաշտոնական պահանջ չի

ներկայացվել՝ երաշխավորելու, որ TEMIS-ը, ըստ էության, կօգտագործվի: Օրինակ՝ համալսարանների համար հանձնագիր չի եղել համակարգում տվյալների մուտքագրման կամ մուտքագրված տվյալներն օգտագործելով հաշվետվությունների կազմման համար, և չկային ժամկետներ կամ պահանջներ TEMIS-ում տվյալների մուտքագրման կամ տվյալների օգտագործման համար: Հետևաբար ո՛չ համալսարանները, ո՛չ ԿԳՄՄՆ-ը ճշգրիտ կամ համապարփակ տվյալներ չունեն հաշվետվություններ կամ պլաններ կազմելու համար: Համալսարանները պատրաստակամ չէին TEMIS-ն օգտագործելու, քանի որ այն չէր համապատասխանում համալսարաններում առկա տվյալների/ԿՏՀ-ի հետ և անվտանգության ցածր մակարդակ ուներ: Հաշվի առնելով համալսարաններից ստացված կարծիքները՝ գործիքը վերանայվել է, և բոլոր համալսարանների ներկայացուցիչները մասնակցել են TEMIS-ի օգտագործման վերաբերյալ վերապատրաստման լրացուցիչ դասընթացին: 2019թ. սկզբի դրությամբ միայն մի քանի հաստատություններ են սկսել տվյալների մուտքագրումը, իսկ մուտքագրված տվյալները շատ դեպքերում թերի են:

TEMIS-ը ներառում է տվյալներ ուսանողների, աշխատակիցների և կազմակերպական կառուցվածքի վերաբերյալ: Գործիքը թույլ է տալիս վիճակագրական տվյալներ հավաքել կառավարման, հաշվապահության, կառավարման խորհրդի, գիտական խորհրդի, բաժինների և ամբիոնների, ուսանողական խորհրդի, կարիերայի կենտրոնի, անդամակցության, այլ հաստատությունների հետ համագործակցության և այլնի մասին: Համալսարանների համար TEMIS-ը դեռևս պարտադիր չէ, այնուամենայնիվ, կառավարությունը ներկայում վերանայում է TEMIS-ի օգտագործումը պարտադիր դարձնելու տարբերակները: Քննարկումներ են ընթանում TEMIS-ի օգտագործման լավագույն մոտեցումը բացահայտելու համար, մասնավորապես՝ համալսարաններում առկա տվյալների կառավարման պատասխանատվության շրջանակում:

Քաղաքականության ուղղություն 6. Մատչելիություն և հավասար հնարավորություններ

Ընդհանուր գնահատականը՝ զարգացող ●●○○

Համառոտ նկարագրություն. *Կան ֆինանսական օժանդակության մի շարք ծրագրեր, որոնք նախատեսված են սոցիալապես անապահով ընտանիքների և բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների համար: Այսպիսի օժանդակությունից օգտվող ուսանողների հատուկ խմբերի մանրամասն նկարագրերը ներկայացված են ֆինանսական օգնության ծրագրերում և համաֆինանսավորման մեխանիզմների բաժնում: Բարձրագույն կրթության համակարգ մուտք գործելու միանգամայն մատչելի և թափանցիկ ընթացակարգեր կան, սակայն դրանք թաթախված են կոռուպցիայի մեջ: Կառավարությունը ստեղծել է ուսանողների շարժունության մեխանիզմ, սակայն տարբեր համալսարանների կողմից առաջարկվող ծրագրերում առկա զգալի տարբերությունները բարդացնում են այս գործընթացը:*

Այս բաժնում մատչելիությունը և հավասար հնարավորությունները վերլուծվում են հետևյալ հինգ հարցադրումների միջոցով. 1) Սոցիալապես անապահով ընտանիքներից ուսանողների համար արդյոք կա՞ն ֆինանսական աջակցության պետական ծրագրեր կամ համաֆինանսավորման մեխանիզմներ մատչելիության, հավասար հնարավորությունների և համակարգում պահելու նպատակների համար: 2) Ընդունելության ընթացակարգերը թափանցիկ և մատչելի են: 3) Բարձրագույն ուսումնական հաստատությունների համար կա՞ն արդյոք ֆինանսական միջոցներ օժանդակության ծրագրերի իրականացման համար: 4) Բարձրագույն կրթության համակարգում արդյոք գոյություն ունե՞ն խտրականությունը և ոտնձգությունները բացառող քաղաքականություններ: (5) Կա՞ն արդյոք սոցիալական շարժունությունը խթանող մեխանիզմներ նույն կամ տարբեր բարձրագույն ուսումնական հաստատությունների (բուհ) միջև ուսանողների շարժունությունն իրականացնելու համար:

Ֆինանսական աջակցության ծրագրեր և համաֆինանսավորման մեխանիզմներ

Կան ֆինանսական աջակցության մի շարք ծրագրեր, որոնք բարձրագույն կրթությունը մատչելի են դարձնում սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների համար, մասնավորապես անվճար տեղերի հատկացմամբ: Ընդհանուր առմամբ, Կառավարության համար դեռևս դժվար է բյուջե հատկացնել այս նախաձեռնությունների համար: Բարձրագույն կրթության ոլորտի ընդհանուր բյուջեն ծայրահեղ փոքր է՝ մոտավորապես 25 միլիոն ԱՄՆ դոլար տարեկան, իսկ բարձրագույն կրթության ոլորտի ֆինանսական միջոցների մեծ մասը (80 – 85%) գոյանում է ուսման վարձերից: Գոյություն ունեցող ծրագրերն ուղղված են սոցիալ-տնտեսական ցածր մակարդակ ունեցող ուսանողներին, հաշմանդամություն ունեցող ուսանողներին, սահմանամերձ և հեռավոր գյուղերում ապրող ուսանողներին, այն ուսանողներին, որոնց հայրերը զոհվել են պատերազմում, որոնք երկու կամ ավելի երեխաներ ունեն և այլն:

Ուսանողական վարկերը հարաբերականորեն վերջերս ներդրված գործիք են՝ սատարելու ուսանողներին բարձրագույն կրթություն ստանալու հարցում: Ըստ ՀՀ Կառավարության վիճակագրական տվյալների (հունվար 2019), կա մարման ենթակա 14,231 ուսանողական վարկ, որոնց ընդամենը ծավալը կազմում է 4 միլիարդ ՀՀ դրամից ավելի (մոտավորապես 8,3 միլիոն ԱՄՆ դոլար): Այս վարկերը տրամադրվում են 10 առևտրային բանկերի կողմից, իսկ

ծրագրի համար ընդհանուր պատասխանատվությունը կրում է Հայաստանի Կենտրոնական բանկի կողմից հիմնադրված «Բնակարան երիտասարդներին» հիմնադրամը: 2019թ. մարտին ՀՀ Կառավարությունը փոխեց ուսանողական վարկերի վերաբերյալ կարգավորումները: Ուսանողական վարկի առավելագույն հասանելի չափը տարեկան 450,000 ՀՀ դրամից (մոտավորապես 940 ԱՄՆ դոլարի) հասցվեց տարեկան 700,000 ՀՀ դրամի (մոտավորապես 1,460 ԱՄՆ դոլարի): Ուսանողները կարող են ստանալ ընդամենը մինչև 2.8 միլիոն ՀՀ դրամ (5840 ԱՄՆ դոլար) վարկ 4 տարվա համար: Ուսանողները պետք է մարեն վարկերը տասնամյա ժամկետում: Ուսանողական վարկերի տոկոսադրույքները նվազեցվեցին՝ 12%-ից հասնելով 9%-ի: Այս 9% դրույքաչափից 6%-ը վճարվում է ուսանողի կողմից, իսկ 3%-ը վճարում է Կառավարությունը: Բոլոր սովորական բակալավրական և մագիստրոսական ՄԿԾ-ների ուսանողներն իրավասու են ստանալ ուսանողական վարկեր: 2019թ. մարտ ամսից կլինիկական օրդինատուրայի ուսանողներին նույնպես տրվել է իրավասություն՝ ուսանողական վարկեր ստանալու:

«Բարձրագույն կրթության և հետբուհական մասնագիտական կրթության» մասին ՀՀ օրենքի 6-րդ (4) և 21-րդ (1(12)) հոդվածների համաձայն՝ ՀՀ կառավարությունն ընդունել է որոշում ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստների և պետական կրթաթոշակների տրամադրման մասին:

Պետությունն ապահովում է ուսման վարձի լրիվ փոխհատուցում հետևյալ ուսանողներին.

ա) Այն ուսանողներին, որոնք մրցութային կարգով մեկ ուսումնական տարում հանձնած քննություններում և թեստերում ստացել են բարձր գնահատականներ,
բ) Օրենքով սահմանված հետևյալ սոցիալական խմբերին.

- Առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին և այդ կարգն ունեցող այլ անձանց՝ համաձայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության» մասին ՀՀ օրենքի,*
- 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամություն ունեցող անձանց և «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված և «հաշմանդամություն ունեցող երեխայի» կարգավիճակ ստացած անհատներին,*
- «Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով սահմանված զոհված զինձառայողների երեխաներին (ուսանողներին), այն ուսանողներին, որոնք հաշմանդամություն են ձեռք բերել պարտադիր զինվորական ծառայության ժամանակ,*

գ) Այն ուսանողներին, որոնք նպատակային ուսուցմամբ ընդունվել են պետական առաջնահերթություն հանդիսացող և պետության համար նշանակություն ունեցող մասնագիտական ոլորտներ:

Առանց ծնողական խնամքի մնացած ուսանողները և այդ կարգավիճակն ունեցող այլ անձինք, ինչպես նաև զոհված զինձառայողների երեխաներ հանդիսացող ուսանողները ստանում են նպաստ ուսումնական 1-ին տարվանից մինչև կրթական ծրագրի ավարտը: 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամություն ունեցող անձինք և «հաշմանդամություն ունեցող երեխայի» կարգավիճակ ստացած անձինք, ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայության ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած ուսանողները, անհրաժեշտ փաստաթղթերի

ներկայացման դեպքում, ստանում են նպաստ ուսումնական 1-ին տարվա սկզբից, և այս կետը վերանայվում է յուրաքանչյուր ակադեմիական տարվա ավարտին:

Պետությունն ուսանողական նպաստի տեսքով մասնակի փոխհատուցում է տրամադրում այն ուսանողներին, որոնք ցուցաբերում են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից սահմանած ուսանողական միջին որակական գնահատականի նվազագույն շեմը բավարարող առաջադիմություն, և որոնք պատկանում են ընտանիքի խոցելիության գնահատման համակարգում գրանցված խմբերին և գերազանցում են խոցելիության շեմը, որը սահմանվում է ՀՀ կառավարության կողմից ամեն տարի: Խոսքը հետևյալ խմբերի մասին է.

- ա) ուսման վարձի 50%-ը փոխհատուցվում է այն ուսանողներին, որոնց ընտանիքները գերազանցում են խոցելիության շեմը մինչև 5 միավորով,*
- բ) ուսման վարձի 60%-ը փոխհատուցվում է այն ուսանողներին, որոնց ընտանիքները գերազանցում են խոցելիության շեմը 5-10 միավորով,*
- գ) ուսման վարձի 70%-ը փոխհատուցվում է այն ուսանողներին, որոնց ընտանիքները գերազանցում են խոցելիության շեմը 10-15 միավորով,*
- դ) ուսման վարձի 80%-ը փոխհատուցվում է այն ուսանողներին, որոնց ընտանիքները գերազանցում են խոցելիության շեմը 15-20 միավորով,*
- ե) ուսման վարձի 100%-ը փոխհատուցվում է այն ուսանողներին, որոնց ընտանիքները գերազանցում են խոցելիության շեմը ավելի քան 20 միավորով:*

«Կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բարձրագույն ուսումնական հաստատությունները մասնակիորեն սեփական միջոցների հաշվին են փոխհատուցում վճարովի հիմունքներով սովորող ուսանողների առնվազն 10%-ի ուսման վարձն ուսանողական նպաստի տեսքով՝ հաշվի առնելով ուսանողի ֆինանսական վիճակը և ակադեմիական բարձր առաջադիմությունը: Իրականում համալսարանները փոխհատուցում են իրենց ուսանողների ավելի քան 10%-ի ուսման վարձը: Համալսարանները չեն ազատվում հարկերից իրենց ուսանողների ուսման վարձը փոխհատուցելու համար:

Չկան ճշգրիտ թվեր ֆինանսական աջակցություն ստացող ուսանողների վերաբերյալ, քանի որ տարբեր կազմակերպություններ, ներառյալ բարեգործական հիմնադրամներ, բիզնեսներ և ընկերություններ, են աջակցում բարձրագույն կրթության ուսանողներին: Մի շարք համալսարաններում ուսանողների 25-30%-ը ստանում է որոշակի ֆինանսական օգնություն:

Թափանցիկ և մատչելի ընդունելության ընթացակարգեր

Հայաստանն ունի ինչ-որ չափով թափանցիկ չափորոշիչներ բարձրագույն կրթության համակարգ մուտք գործելու համար: Բարձրագույն ուսումնական հաստատություններն են որոշում ընդունելության չափանիշները հեռակա բաժնի ծրագրերի համար, սակայն կիրառում են միասնական քննությունների մրցութային արդյունքներն առկա ծրագրերի համար: Թեև ենթադրվում է, որ այս գործընթացները պետք է թափանցիկ լինեն, դրանք թաթախված են կոռուպցիայի մեջ: Մի քանի տարի առաջ, երբ դիմորդների թիվն ավելի շատ էր, կոռուպցիոն ռիսկերն ավելի բարձր էին: Ընդունելության քննությունների ժամանակ արտագրելն ավելի լայն տարածում գտավ, երբ քննություններն անց էին կացվում համալսարանների կողմից:

Գնահատման և թեստավորման կենտրոնի՝ ընդունելության քննությունների պատասխանատվությունը ստանձնելուց ի վեր՝ արտագրությունների և կոռուպցիոն դեպքերի թիվը զգալիորեն նվազել է: Շատ դեպքերում ուսանողներն օգտվում էին տեխնոլոգիական միջոցներից քննությունների ժամանակ արտագրելու համար: Կոռուպցիայից բացի՝ կան նաև այլ ընթացակարգեր, ինչպես օրինակ՝ օլիմպիադաների կամ այլ մրցույթների ժամանակ ստացած մրցանակների հիման վրա և նույն ընտանիքի տարբեր սերունդների նույն հաստատություն և մասնագիտության ծրագիր ընդունվելու գործոնները, որոնք գերադասվում են սովորական ընդունելության ընթացակարգերին:

Միասնական ընդունելության քննությունների ժամանակացույցը, վայրը և ուսումնական ծրագրային բովանդակությունը հրապարակվում են նախքան քննությունը, և չնայած մասնավոր պարապմունքները պարտադիր բնույթ չեն կրում, դրանք լայնորեն տարածված են: Միջպետական համալսարաններն ունեն քննությունների տարբեր համակարգեր: Ընդունելության քննությունների ծրագիրը տարբերվում է դպրոցներում դասավանդվող առարկայական ծրագրերից: Հայաստանում ընդամենը մի քանի դպրոցներ ունեն նախապատրաստական դասընթացներ միջպետական համալսարանների քննությունների համար: Այն ուսանողները, որոնք դիմում են պետական բուհեր, նույնպես մասնավոր պարապմունքների են հաճախում: Պետական համալսարանների քննությունները հիմնականում համապատասխանում են դպրոցական ծրագրերին, սակայն կան որոշակի հնարքներ, նրբություններ, որոնց ուսանողները սովորում են տիրապետել մասնավոր կրկնուսույցներից: Մասնավոր կրկնուսուցման մեկ այլ պատճառ է ուսանողների շրջանում ինքնակրթության հետադարձությունների պակասը:

Համակարգը նախատեսում է հատուկ կարիքներով ուսանողների համար բարձրագույն կրթության համակարգը դարձնել մատչելի: ՀՀ կառավարության N597-Ն որոշման համաձայն՝ հատուկ կարիքներով ուսանողներն ընդունվում են բարձրագույն կրթության համակարգ անվճար հիմունքներով միասնական ընդունելության քննություններում նվազագույն անցողիկ գնահատականը ստանալու դեպքում: Բացի այդ՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստների և պետական կրթաթոշակների տրամադրման կարգի մասին ՀՀ կառավարության N1183 որոշմամբ 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամություն ունեցող անձինք և «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված և «հաշմանդամություն ունեցող երեխայի» կարգավիճակ ստացած անհատները նույնպես անվճար կրթության իրավունք են ստանում:

Բուհերի կողմից համայնքային նշանակության ծրագրերի իրականացման խթաններ

Բարձրագույն ուսումնական հաստատությունների համար համայնքային նշանակության ծրագրերի իրականացմանն օժանդակող ծրագրեր չկան: Համալսարանները սերտորեն համագործակցում են դպրոցների հետ՝ ներկայացնելու իրենց բաժինները և մասնագիտությունները: Համալսարանի դասախոսներն այցելում են դպրոցներ՝ համալսարանի տարբեր ծրագրերի մասին իրազեկման նպատակով ելույթներ ունենալու և հարց-պատասխան ձևաչափով հանդիպումներին մասնակցելու: Մակայն կյանքի դժվարին վիճակում հայտնված ուսանողներին ուղղված հատուկ ծրագրեր չկան:

Խտրականությունը և ոտնձգությունները բացառող քաղաքականություններ

Հայաստանում կրթության ոլորտում խտրականությունը և ոտնձգությունները բացառող հատուկ փաստաթուղթ չկա: Այս քաղաքականությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ: Սահմանադրության 29-րդ հոդվածը «Խտրականության արգելքի» մասին է, և այն նշում է, որ

«Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:

Չնայած Կառավարությունը գտնվում է խտրականությունը բացառող օրենքի ընդունման գործընթացում, Ազգային ժողովը դեռևս չի ընդունել խտրականության արգելքի մասին օրենքի նախագիծը: Համալսարանները չունեն խտրականությունը և ոտնձգությունները բացառող հատուկ քաղաքականություններ, և չկա այս քաղաքականությունների մշակման համար աջակցություն կամ պարգև:

Ուսանողների շարժունության մեխանիզմներ.

Բարձրագույն կրթությունում ուսանողների ակադեմիական շարժունությունը կարգավորվում է «Բարձրագույն կրթության և հետրուհական մասնագիտական կրթության» մասին ՀՀ օրենքի ներքո «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգով», որն ընդունվել է 2011 թվականին: Հայաստանի Հանրապետությունն ուսանողներին և աշխատակիցներին առաջարկում է ԵՄ-ի շրջանակային ծրագրերի միջոցով ակադեմիական շարժունության հնարավորություններ, որոնցից են «ԷԲԱԶՄՈՒՄ ՄՈՒՆԴՈՒՄ», «ԷԲԱԶՄՈՒՄ+» (նախկինում՝ «ՏԵՄՊՈՒՄ») ծրագրերը:

Բացի այդ, ՀՀ-ն աջակցում է ուսանողների շարժունությանը և բարձրագույն կրթության կրեդիտների փոխձանաչմանն ազգային և միջազգային մակարդակով այնպիսի նախաձեռնությունների միջոցով, ինչպիսիք են՝ «Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգը» (ECTS), դիպլոմի հավելվածը և «Ակադեմիական փոխձանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնը» (ARMENIC): Շահակիցների հետ հարցազրույցների համաձայն՝ ուսանողական շարժունությունն իրականում խրթին գործընթաց է: Արտասահմանից վերադառնալուց հետո որոշ ուսանողներից պահանջվում է կրկնակի քննություններ հանձնել: Տարբեր համալսարանների ծրագրերի միջև տարբերությունները մեծ են, ինչը դժվարացնում է կրեդիտների փոխանցումը: Շարժունության գործընթացի հիմնական խնդիրներից մեկն ուսանողների ներքին շարժունությունն է: Ուսանողների համար չկան այլ համալսարաններում դասընթացներ անցնելու հնարավորություններ: Ընդհանուր ընկալումն այն է, որ առկա համակարգը շատ կոշտ է և կա ավելի մեծ ճկունության անհրաժեշտություն:

Քաղաքականության ուղղություն 7. Երկրի սոցիալական եվ տնտեսական կարիքներին վերաբերելիություն
Ընդհանուր գնահատական՝ զարգացող ●●○○

Քաղաքականության լծակ Աշխատաշուկային վերաբերելիություն Զարգացող ●●○○	1. Քաղաքականության լծակ 2. Հետազոտությունների, զարգացման և նորարարության խթանում Կայացած ●●●○	Քաղաքականության լծակ 3. Սոցիալական և բնապահպանական վերաբերելիություն Լատենտ ●○○○
---	--	---

Համառոտ նկարագրություն. *Ինստիտուցիոնալ մակարդակում կան մի շարք նախաձեռնություններ, որոնք ուղղված են բարձրագույն կրթության շրջանավարտների ուսումնառության արդյունքների չափմանն աշխատաշուկայի պահանջների հետ համեմատությամբ, սակայն դրանք պարտադիր չեն և իրականացվում են մի քանի հաստատությունների կողմից: Գործնական ուսուցումը պարտադիր է օրենքով և իրականացվում է երկրի բոլոր համալսարանների կողմից: Կա քաղաքականության պահանջ՝ ուղղված բարձրագույն կրթության զարգացմանը, մասնավորապես՝ ՀԶՆ-ի գործունեության շուրջ, սակայն այն քննադատվում է արդյունավետության բացակայության պատճառով: Համալսարանների, հատկապես՝ մասնավորների, ՀԶՆ հնարավորությունները սահմանափակ են ֆինանսական միջոցների բացակայության պատճառով: Կա քաղաքականության պահանջ՝ Հայաստանում սոցիալական և մշակութային զարգացումը խթանելու հարցում բարձրագույն կրթության դերը քննարկելու համար, սակայն այն չի ուղեկցվում ֆինանսական աջակցությամբ:*

Երկրի սոցիալական և տնտեսական կարիքներին վերաբերելիությունը դիտարկվում է հետևյալ երեք հարցադրումների միջոցով. 1) Համակարգը խթանո՞ւմ է աշխատաշուկային համապատասխան կրթությունը: (2) Արդյո՞ք դա նպաստո՞ւմ է հետազոտական և զարգացման գործունեությանը: (3) Համակարգն ակտիվորեն նպաստո՞ւմ է սոցիալական և մշակութային զարգացմանը:

7.1 քաղաքականության լծակ. Աշխատաշուկային վերաբերելիությունը
Զարգացող ●●○○

Բարձրագույն կրթության համակարգի՝ աշխատաշուկային վերաբերելիությունը դիտարկվում է հետևյալ երեք հարցադրումներով. կա՞ն արդյո՞ք քաղաքականություններ և ծրագրեր, որոնք բարձրացնում են բարձրագույն կրթության վերաբերելիությունն աշխատաշուկայում: Մենք գնահատում ենք (1) աշխատաշուկայի պահանջների համեմատ շրջանավարտների կրթական

վերջնարդյունքները չափելու նախաձեռնությունները, 2) պրակտիկան և գործնական ուսուցումը խթանելու ծրագրերը և (3) ուսումնական ծրագրի՝ աշխատաշուկային վերաբերելիությունը բարձրացնելու նախաձեռնությունները:

Աշխատաշուկայի պահանջների համեմատ կրթական վերջնարդյունքները չափելու նախաձեռնություններ

Բարձրագույն կրթության շրջանավարտների կրթական վերջնարդյունքները աշխատաշուկայի պահանջների համեմատ գնահատելու համար կան մի քանի նախաձեռնություններ: Առանձին բարձրագույն ուսումնական հաստատություններն անցկացնում են շրջանավարտներին վերաբերող հետազոտություններ, որոնք չեն օգտագործվում քաղաքականության մշակման որոշումների կայացման համար: Այս հետազոտությունները պարտադիր չեն և իրականացվում են մի քանի համալսարանների կողմից: Մի շարք հետազոտություններ իրականացվում են միջազգային կազմակերպությունների աջակցությամբ, օրինակ՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը ներկայում մեկնարկում է այսպիսի մասշտաբային նախաձեռնություն:

Պրակտիկան և գործնական ուսուցումը խթանելու ծրագրեր.

Կա քաղաքականության պահանջ գործնական ուսուցումը խթանելու համար, որը ներառում է մասնավոր ձեռնարկությունների կողմից գործնական դասընթացներ վարելու ծրագրեր: «Բարձրագույն կրթության և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում գործնական ուսուցումը նշվում է որպես անհրաժեշտ ուսումնական գործունեություն: Օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ անհրաժեշտ է մշակել մասնագիտությունների չափորոշիչներ, և բոլոր ծրագրերը պետք է ունենան գործնական ուսուցման բաղադրիչ: Բազմաթիվ համալսարաններ ավելացնում են գործնական դասընթացների ժամերը, և այս գործունեության մեջ ներգրավված են մի շարք մասնավոր ձեռնարկություններ: Ուսանողները կարող են կրեդիտներ հավաքել գործնական դասընթացների համար, քանի որ սա ուսումնական ծրագրի անհրաժեշտ բաղադրիչն է:

Հայաստանում գործնական ուսուցման ծրագրեր իրականացվում են բոլոր համալսարանների կողմից: Հայաստանի ամերիկյան համալսարանը, Հայաստանում ֆրանսիական համալսարանը և Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանն ավելի ակտիվ են իրենց ուսանողներին պրակտիկայի ծրագրեր առաջարկելու հարցում:

Օրինակ՝ Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Թարգմանության վկայագիր շնորհող ծրագիրը և «Գալուստ Կիլպենկեան» հիմնադրամի հայկական համայնքների բաժանմունքը հայտարարել են ՀԱՀ-ում «Գալուստ Կիլպենկեան» թարգմանական մատենաշարի պրակտիկայի մեկնարկը: Պրակտիկայի նպատակն է աջակցել Կիլպենկեան հիմնադրամի թարգմանական մատենաշարի ծրագրի իրականացմանը, որը հումանիտար և հասարակական գիտությունների ազդեցիկ տեքստերը դարձնում է հայերենով հասանելի: Այս պրակտիկան նախատեսված է մեկ տարի տևողությամբ, ներառյալ ամառը, Թարգմանության վկայագիր շնորհող ծրագրի ուսանողի համար: Մա բացառիկ հնարավորություն է ուսանողների համար, որպեսզի նրանք իրենց ուժերը փորձեն թարգմանության և Հայաստանում հրատարակման ոլորտներում՝ շեշտը դնելով ակադեմիական խստապահանջության և գործնական փորձի վրա:

Կրթական ծրագրի՝ աշխատաշուկային վերաբերելիությունը բարձրացնելու նախաձեռնություններ.

Կրթական ծրագրերի՝ շուկային համապատասխան դարձնելը Հայաստանի բարձրագույն կրթության կարևորագույն խնդիրներից մեկն է, սակայն այս ոլորտում առանցքային բարելավումներ չկան: Ինչպես նշվել է պրակտիկան և գործնական ուսուցումը խթանելու ծրագրերի մասին վերոհիշյալ բաժնում, թարգմանության ոլորտում համալսարանների ուսումնական ծրագրերը և շուկան շաղկապող հետաքրքիր փորձ կա: Արդյունաբերության կարիքների համար կրթական ծրագրերի համադրման ուղղությամբ կան որոշակի ջանքեր, որոնցում կրթության փորձագետները գործատուներին և համալսարանի աշխատակիցներին համախմբում են կրթական ծրագրերի՝ շուկայի վերաբերելիությունը բարելավելու համար:

7.2 Քաղաքականության լծակ. Հետազոտությունների, զարգացման եվ նորարարության խթանում

Կայացած ●●●○

Հետազոտության, զարգացման և նորարարության խթանման ներկա վիճակը որոշվում է երկու հարցադրմամբ: 1) Արդյոք գոյություն ունեն համակարգային կամ ոլորտային քաղաքականություններ, որոնք նպաստում են հետազոտություններին, զարգացմանը և նորարարությանը (ՀՋՆ): (2) Կա՞րդյոք ֆինանսական աջակցություն կամ կա՞ն հատուկ ծրագրեր, որոնք խրախուսում են ՀՋՆ-ի գործունեությունը:

ՀՋՆ-ին նպաստող համակարգային կամ ոլորտային քաղաքականություններ

Կա քաղաքականության պահանջ, որն ուղղված է բարձրագույն կրթության զարգացմանը, մասնավորապես՝ ՀՋՆ-ի գործունեության շուրջ, սակայն այն չի գործում: Համալսարանները, մասնավորապես՝ մասնավորները, ֆինանսական միջոցների բացակայության պատճառով չունեն ՀՋՆ-ի շատ հնարավորություններ: Կան նախաձեռնություններ, ինչպես օրինակ՝ կառավարություն-արդյունաբերություն-համալսարան համագործակցությունը, գերազանցության կենտրոններին օժանդակելը և քաղաքականությանը համապատասխան և կառավարության կողմից իրականացվող հետազոտություններին աջակցելը: Վերջերս Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքում գտնվող Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (ՀԱԱՀ) ուսումնափորձարարական մասնաճյուղում տեղի ունեցավ գինեգործական կրթության գիտաարտադրական կենտրոնի բացումը: Գինեգործական կրթության գիտաարտադրական կենտրոնը հիմնադրվել է Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) շրջանակներում Համաշխարհային բանկի համաֆինանսավորմամբ: Գինեգործական կրթության գիտաարտադրական կենտրոնի հիմնադրման պատմությունը սկսվում է 2015թ. դեկտեմբերին, երբ ՆՄՀ-ի շրջանակներում մեկնարկեց «Գինեգործական կրթության գիտաարտադրական բաղադրիչի զարգացում» (ԳԿԳԱԲԶ) դրամաշնորհային ծրագրի իրականացումը: Դրամաշնորհային ծրագրի արդյունքում Ոսկեհատ համայնքում գտնվող համալսարանի ուսումնափորձարարական մասնաճյուղում ստեղծվում է գինեգործության լիարժեք ծրագիր, ինչպես նաև գիտատեխնիկական ժամանակակից սարքավորումներով հագեցած օրինակելի տարածք՝ նախատեսված գիտափորձերի համար:

ՀՋՆ-ին նպաստող նախաձեռնություններ և ծրագրեր

ՀՋՆ-ի ծախսերը բարձրագույն կրթության ոլորտում պետական տարեկան ծախսերի փոքր

մասն են: Կառավարությունը պետական համալսարաններին, գիտահետազոտական ինստիտուտներին և ակադեմիաներին տրամադրում է բազային և թեմատիկ ֆինանսավորում հետազոտություն իրականացնելու համար: Ֆինանսավորման երկու տեսակներն էլ տրամադրվում են մրցութային հիմունքներով: Հիմնական ֆինանսավորումը գիտահետազոտական ինստիտուտների և լաբորատորիաների համար է, իսկ թեմատիկ ֆինանսավորումը նախատեսված է համալսարանների պրոֆեսորադասախոսական և գիտահետազոտական և մինչև 35 տարեկան երիտասարդ հետազոտողների խմբերի համար: Ֆինանսավորման ոլորտները ներառում են՝ STEM (բնագիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա), ճարտարապետություն, գյուղատնտեսություն, բժշկություն, հասարակական գիտություններ և հայագիտություն: Նորարարությունների մրցակցային հիմնադրամն ուղղված է նաև նորարարությունների և հետազոտական հնարավորությունների զարգացումը խթանելուն: Դրամաշնորհները տրվում են մրցութային հիմունքներով բարձրագույն ուսումնական հաստատությունների արդյունավետությունը բարձրացնելու, ուսուցման և ուսումնառության գործընթացներում հետազոտություններն ընդգրկելու և ակադեմիական կապերն աշխատաշուկայի հետ ամրապնդելու համար:

7.3 Քաղաքականության լծակ. սոցիալական եվ բնապահպանական վերաբերելիություն **Լատենտ ●○○○**

Երկրում բարձրագույն կրթության համակարգի սոցիալական և բնապահպանական վերաբերելիության գնահատման համար մեզ հետաքրքրում է՝ արդյոք կա՞նք քաղաքականություններ և ծրագրեր՝ աջակցելու 1) սոցիալական և մշակութային զարգացմանը և (2) շրջակա միջավայրի պաշտպանությանը:

Սոցիալական և մշակութային զարգացմանն ուղղված քաղաքականություններ և ծրագրեր

Կա քաղաքականության պահանջ՝ Հայաստանում սոցիալական և մշակութային զարգացումը խթանելու գործում բարձրագույն կրթության դերը քննարկելու համար, սակայն այն չի ուղեկցվում ֆինանսական աջակցությամբ: «Բարձրագույն կրթության և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը նշում է համալսարանների կարևոր դերը հասարակության մշակութային գրագիտության բարձրացման և քաղաքացիական հմտությունների զարգացման գործում: Պետական համալսարանները և միջպետական հաստատություններն ավելի ակտիվ են երկրում սոցիալական և մշակութային զարգացմանն աջակցելու գործում, քան մասնավոր համալսարանները, քանի որ դրանք ունեն ավելի շատ ֆինանսական, նյութական և մարդկային ռեսուրսներ:

Շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծրագրեր և քաղաքականություններ.

Հայաստանում բարձրագույն ուսումնական հաստատությունները չեն արժանանում աջակցության շրջակա միջավայրի պահպանման և կայունության գործում նշանակալի դերակատարություն ունենալու համար: Ներկայում համալսարանները դասավանդում են «Էկոլոգիա», սակայն այս նախաձեռնության համար ֆինանսական աջակցություն չեն ստանում կառավարությունից:

Եզրակացություն և խորհրդատվություններ

Հայաստանի բարձրագույն կրթության համակարգն այսօր ներկայանում է բարեփոխումների ահռելի հնարավորություններով: Հայաստանը Բոլոնիայի գործընթացի մասնակից է, ինչը շահեկան ռեսուրս է բարեփոխումների իրականացման համար: 2015թ. Բոլոնիայի գագաթաժողովի կազմակերպումից հետո Հայաստանը կարող է հույս դնել պատրաստակամ աջակիցների ցանցի վրա միևնույն ժամանակ այս գործընթացում առաջատարի դեր խաղալով: Բացի այդ, Թավշյա հեղափոխությունը նոր հնարավորություններ է բացել՝ բարձրագույն կրթության համակարգը փոխելու և այն ավելի արդյունավետ դարձնելու համար: Ակնհայտ է բարձրագույն կրթության ռազմավարական հայեցակարգի մշակման, «Բարձրագույն կրթության մասին» օրենքի մշակման և կառավարման համակարգի բարելավման անհրաժեշտությունը: Պետական համալսարանների հոգաբարձուների նոր խորհուրդները ձևավորվել են, և հույս կա, որ նրանք հանդես կգան որպես անկախ և կոմպետենտ կառավարման մարմիններ:

Միևնույն ժամանակ, համալսարանները շարունակում են բախվել լուրջ ֆինանսական սահմանափակումների վերջին երկու տարիներին ուսանողական համակարգի նվազման արդյունքում, իսկ մի շարք մասնավոր համալսարաններ գուցե և չկարողանան շարունակել իրենց գործունեությունը այս իրավիճակում: Պետական համալսարանները նույնպես բախվում են ֆինանսական խնդիրների: Հանրային անվտանգություն կա բարձրագույն կրթության վերջնարդյունքների որակի նկատմամբ, ինչը նշանակում է, որ որակի ներքին և արտաքին ապահովման համակարգերը բարելավման կարիք ունեն: Կառավարությունը քննարկում է համալսարանների խոշորացման, համալսարանների ծրագրային հավատարմագրման և մրցակցային ֆինանսավորման հիմքով ֆինանսավորման մեխանիզմների վերանայման հնարավորությունը:

Այս համատեքստում հարկ է, որ համալսարանները, շահակիցներն ու Կառավարությունները դիտարկեն հետևյալ խորհրդատվությունները .

Բարձրագույն կրթության ռազմավարություն

Հրատապ է բարձրագույն կրթության ռազմավարության և «Բարձրագույն կրթության մասին» նոր օրենքի մշակման անհրաժեշտությունը՝ սահմանելու ոլորտի և երկրի համար միասնական տեղականի իրացման ուղին: Գործող օրենքն այլևս արդիական չէ, քանի որ ընդունվել է դեռևս 2004թ., անգամ Հայաստանի՝ Բոլոնիայի գործընթացին միանալուց առաջ: Կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարությունը մի քանի փորձ է արել՝ մշակելու վերոնշյալ փաստաթղթերը, սակայն տարբեր պատճառներով դեռևս չի հաջողել ավարտել դրանց մշակումը:

Կառավարում

Կառավարման համակարգը պետք է հավասար հնարավորություններ տրամադրի պետական, մասնավոր և միջպետական հաստատություններին՝ հիմնարար կարգավորման առումով: Հայաստանի բարձրագույն կրթության համակարգը բաղկացած է երեք տիպի հաստատություններից. պետական համալսարաններ, մասնավոր համալսարաններ և

միջպետական համալսարաններ: Պետական համալսարանները գտնվել և գտնվում են պետության վերահսկողության ներքո, այնինչ մասնավոր համալսարանները՝ ոչ: Մասնավոր համալսարանները չունեն հավասար հնարավորություններ՝ մրցելու պետական համալսարանների հետ, և շատ մասնավոր համալսարաններում կրթության որակը շատ ցածր է: Մասնավոր համալսարանների մեծ մասը չի դիմել հավատարմագրման: Միջպետական համալսարանները ավելի արտոնյալ վիճակում են: Նրանք ավելի մեծ ֆինանսական աջակցություն են ստանում, ունենում են ավելի լավ կրթված և ավելի մոտիվացված ուսանողական համակազմ և իշխանությունների կողմից ավելի թույլ վերահսկողության են ենթարկվում:

Թեև ինքնավարությունը պետական համալսարանների դեպքում սահմանափակ է, մասնավոր և միջպետական համալսարաններն ունեն ակադեմիական, ՊԴ կազմի համալրման, կառավարման և ֆինանսական ինքնավարության զգալի մակարդակ: Թեև մասնավոր և միջպետական հատվածի համար ինքնավարությունը փաստ է, այն չի համակցվում հաշվետվողականության հետ: Այսպիսի իրադրությունը կարող է հանգեցնել կրթության որակի անկման: Միակ սահմանափակումը «Հայոց լեզվի» և «Հայոց պատմության» պարտադիր դասավանդումն է: Թղթի վրա պետական համալսարանները նույնպես ունեն ինքնավարություն, բայց եղել է մի քանի դեպք, երբ Կառավարությունն ակտիվորեն միջամտել է կառավարման գործերին: Ամենակարևոր հարցերից է մրցակցությունը և համալսարաններում ղեկավարության՝ ռեկտորների, դեկանների, վարչությունների/բաժինների և ամբիոնների ղեկավարների արժանիքների վրա հիմնված ընտրության ինտենսիվացումը: Մի շարք դեպքերում դեկանները և ամբիոնների վարիչները չեն փոխվել 20 – 30 տարի: Համալսարաններում չկա այնպիսի մթնոլորտ, որտեղ պրոֆեսորադասախոսական կազմն ազատ կզգա՝ դիմելու դեկանի, վարչության/բաժնի պետի կամ ամբիոնի վարիչի պաշտոնի համար: Նմանապես պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի ընդունման գործընթացը կարիք ունի ավելի թափանցիկ և մրցակցային լինելու:

Ֆինանսներ

Բարձրագույն ուսումնական հաստատությունների ֆինանսավորման անհամապատասխան ծավալը բարձրագույն կրթության ոլորտի բարելավումները սահմանափակող հիմնական գործոններից մեկն է: Ուսման վարձերը շարունակում են իրականում լինել համալսարանի եկամուտի միակ աղբյուրը, ինչը՝ սահմանափակում է համալսարանների ընդհանուր եկամուտի հնարավորությունները՝ միևնույն ժամանակ ստեղծելով մատչելիության և հավասար հնարավորություններին վերաբերող խնդիրներ: Կառավարության կողմից տրամադրվող ֆինանսական միջոցները հիմնականում ուղղվում են ուսման վարձի մասնակի փոխատուցմանը և արժանիքների հիման վրա, ֆինանսապես անապահով սահմանափակ թվով ուսանողների ուսման վարձերի փոխահատուցմանը: Անհրաժեշտ է արդյունավետորեն բաշխել առկա ֆինանսական միջոցները՝ բարելավելու բարձրագույն կրթության անաչառ և հավասար մատչելիությունը: Պետական համալսարաններն ունեն ֆինանսավորման կայուն մեխանիզմ, սակայն այս մեխանիզմը ժամանակավրեպ է: Պետական համալսարանների մեծ մասը հրապարակում է ֆինանսական հաշվետվությունները համալսարանի կայքում, թեև սա պահանջ չէ: Ֆինանսական թափանցիկությունը մեծացնելու համար Կառավարությունը պետք է բոլոր պետական համալսարաններից պահանջի հրապարակել իրենց ֆինանսական տվյալները: Ներկայում համալսարանները չեն ստանում կատարողականի վրա հիմնված

Ֆինանսավորում: Ֆինանսավորման այս եղանակի ներդրումը (համալսարանների համար պետական միջոցներից ֆինանսավորման ծավալի ընդհանուր մեծացմանը զուգահեռ) կարող է բարելավել համալսարանների ընդհանուր որակը, եթե կատարողականը կապակցվի համապատասխան ցուցանիշների, օրինակ՝ ուսանողների ամփոփիչ ատեստավորման, ուսանողների՝ համակարգից դուրս չմնալու, ավարտելուց հետո զբաղվածության ցուցանիշները, ինչպես նաև հաստատության առաքելությանը վերաբերող այլ կոնկրետ չափանիշները: Համալսարանները պետք է նաև օպտիմալացնեն պետական համալսարանական ցանցը:

Որակի ապահովում

Որակի ապահովման համակարգը էական առաջընթաց է գրանցել՝ համալսարանների համար որակի ապահովման մեխանիզմների ստեղծման և ուժեղացման ուղղությամբ: Հաջորդ քայլը այս համակարգի կայացումն է և բարձրագույն ուսումնական հաստատությունների համար նրանց ինքնավերլուծությունների և մասնագիտությունների կրթական ծրագրերի վերլուծությունների իրականացման հարցում նախաձեռնողականության ստանձնումն է: 2017թ. (5 տարի ժամկետով) ՈԱԱԿ-ը դարձել է Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական գրանցամատյանի (EQAR) անդամ: Հայաստանի բոլոր պետական համալսարաններն ՈԱԱԿ-ից ստացել են ինստիտուցիոնալ հավատարմագրում: Փոքրաթիվ մասնավոր համալսարաններ և միայն մեկ միջպետական համալսարան (Հայաստանում ֆրանսիական համալսարան) են դիմել ՈԱԱԿ՝ հավատարմագրում անցնելու: Մյուս միջպետականները իրենց հավատարմագրումը ստանում են որակի ապահովման միջազգային կազմակերպություններից:

Ծրագրային հավատարմագրումը պարտադիր չի համարվում, բայց մի քանի համալսարաններ դիմում են ծրագրային կամընտիր համատարմագրման համար: Միևնույն ժամանակ ինստիտուցիոնալ հավատարմագրումը կարևոր չափանիշ է, որով պետական և մասնավոր համալսարանները իրավասություն են ստանում դիմելու ՆՄՀ ֆինանսավորման : Ինչ վերաբերում է միջպետական համալսարաններին, նրանք իրավասու են դիմել պայմանով, որ ունենան տեղական որակի ապահովման գործակալության՝ ՈԱԱԿ-ի կողմից ճանաչված և գրանցված միջազգային հավատարմագիր: Ի լրումն, բոլոր համալսարանները, մասնակից կազմակերպություններն ու ընկերությունները պետք է ունենան ռազմավարական ծրագիր (և/կամ բիզնես պլան) առնվազն ՆՄՀ դրամաշնորհային ծրագրի իրականացման ժամանակահատվածի համար, որով կապահովվի, որ դրամաշնորհային հայտադիմումի մեջ առաջարկվող թիրախները համապատասխանում են ռազմավարության մեջ ընդգծված առաջնահերթություններին:

Ըստ ամենայնի, կարևոր է ծրագրային հավատարմագրումը դարձնել պարտադիր, քանի որ այն հնարավորություն է տալիս ավելի ուշադիր դիտարկել ուսումնական ծրագրի որակը, դասավանդման/ուսումնառության աշխատակարգերը, որոնք որակյալ բարձրագույն կրթական համակարգի էական հիմնասյուներն են: Բացի այդ, ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման չափանիշներն ու չափորոշիչները հարկ է պարբերաբար վերանայել:

Բարձրագույն կրթության կառավարման տեղեկատվական համակարգ (TEMIS)

Բարձրագույն կրթության համակարգում տեղի ունեցող իրադարձությունների մասին իրական ժամանակում ստացվող տվյալները ավելի ու ավելի մեծ կարևորություն են ստանում

քաղաքականություն մշակողների համար: Ձավեշտն այն է, որ տվյալների համակարգն արդեն իսկ ստեղծված է ԿՏԱԿ-ի կողմից, բայց այն այս պահին չի գործարկվում: Տարածայնություններ կան մի շարք համալսարանների հետ տվյալների, ինչպես նաև դրանց հավաքման մեխանիզմների մասին: **Բարձրագույն կրթության կառավարման տեղեկատվական գործարկվող համակարգ ունենալու համար հարկ կլինի, որ նախարարությունը, համալսարանները և ԿՏԱԿ-ի ներկայացուցիչները արդյունավետորեն բանակցեն և համատեղ մշակեն TEMIS-ի վերջնական տարբերակը, ինչը կօգնի հավաքել համակողմանի և օգտակար տվյալներ բարձրագույն կրթության ոլորտի մասին:**

Մատչելիություն և հավասար հնարավորություններ

Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի ամենամեծ խնդիրներից մեկն այն է, որ այն մատչելի չէ անապահով ընտանիքներից սերող ուսանողների համար: **Ներկայումս ուսանողների համար հասանելի են ֆինանսական օժանդակության մի շարք ծրագրեր, բայց այս քաղաքականությունները և կարգերն ավելի թիրախավորելու անհրաժեշտություն կա:** Նաև էական է մեծացնել դեպի դպրոցներ շփումներն ու դպրոցներին տրամադրվող ծառայությունները, որտեղից կյանքի դժվարին պայմաններում հայտնված երեխաները համակարգված կերպով գտվում են: **Մատչելիությունը դեռևս խնդիր է, քանի որ համալսարանները հույս են դնում ուսման վարձերի վրա, որոնք և ձևավորում են նրանց գրեթե ողջ եկամուտը:** Համալսարաններում պետական ֆինանսավորմամբ տեղերը շատ սահմանափակ են և հիմնականում բաշխվում են ըստ արժանիքների: Արդյունքում, անապահով ընտանիքներից միայն փոքրաթիվ ուսանողներ են կարողանում ընդունվել համալսարաններ: Նրանք, ովքեր ընդունվում են համալսարաններ, իրավասու են օգտվել ուսման վարձերի՝ տարբեր, մասնակի կամ ամբողջական փոխհատուցման հնարավորություններից, որոնց մասին որոշումը կայացվում է ուսանողի ընտանիքի եկամուտի մակարդակի հիման վրա: Անգամ եթե նրանք ընդունվում են պետպատվեր համակարգ, շատերը չեն կարողանում իրենց թույլ տալ ապրել քաղաքներում, քանի որ Կառավարության կողմից տրվող թոշակները բավարար չեն կենցաղային ծախսերը հոգալու համար: Անհրաժեշտություն կա փոխել ֆինանսական օժանդակության սխեմաները և անապահով ընտանիքներից սերող ուսանողներին տալ ոչ միայն անվճար կրթություն ստանալու, այլև կեցության ծախսերը հոգալու հնարավորություն:

Երկրորդ նշանակալի խնդիրը վերաբերում է հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին: Բարձրագույն կրթության ոլորտում ներառական կրթությունը նախորդ կառավարությունների կողմից առաջնահերթություն չի համարվել: Հարկ է սատարել հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին՝ բարձրագույն կրթություն ստանալու նրանց իրավունքի իրացման համար:

Բացի այդ, անհրաժեշտ է զարգացնել ուսանողների ներքին շարժունության համակարգը և կրթողիները դարձնել ավելի ճկուն: Ներկայումս բարձրագույն կրթության տարբեր ուղղությունների միջև կրթողիները հստակ չեն, ինչը սահմանափակում է համակարգի ներսում ուսանողի շարժունությունը: Ի վերջո, Կառավարությունը և հաստատությունները պետք է մտածեն խտրականությունը և ոտնձգությունները բացառող արդյունավետ քաղաքականության մշակման մասին: Կրթական արդյունքների բարելավմանն ուղղված մոտեցմամբ (SABER) վարժանքի ընթացքում չի գտնվել բարձրագույն ուսումնական

հաստատությունների նկատմամբ կիրառվող, խտրականության և ոտնձգությունների բացառման քաղաքականության որևէ վկայություն:

Բարձրագույն կրթության վերաբերելիությունը սոցիալական և կրթական կարիքներին

Ղեռնս հսկայական խզում կա բարձրագույն կրթության և աշխատաշուկայի միջև: Այս ասելով՝ հարկ է նշել, որ համալսարանները սկսել են ներառել պրակտիկան իրենց ուսումնական ծրագրերում: Այնուամենայնիվ, պրակտիկաները ուսումնական ծրագրի շատ փոքր բաղադրիչն են: Դրանք իրականացվում են միայն կարճ ժամանակով, և չկա այն ուղղորդող որևէ ծրագիր կամ ավարտելու համար սահմանված պահանջ: Պրակտիկայի այս կարճաժամկետ ծրագրերը չեն օգնում պրակտիկանտների կարողությունների կատարելագործմանը, ինչը կհանգեցնեք նրանց ուսումնառած նյութի ամրապնդմանը, կբարձրացնեք կոնկրետ ոլորտների մասին նրանց իրազեկությունը կամ գիտելիքը, կխթանեք նրանց ապագա զբաղմունակությունը: Ուսուցման համապատասխան նյութատեխնիկական պայմանների բացակայությունը, պրակտիկաների կարճ տևողությունը, պրակտիկաների՝ լավ ձևակերպված ուսումնական ծրագրերի բացակայությունը, թե՛ պրակտիկանտների, թե՛ արդյունաբերության ներկայացուցիչների կողմից շահագրգռության բացակայությունը այն հիմնական գործոններից են, որոնք պայմանավորում են բարձրագույն կրթության և աշխատաշուկայի միջև խզումը: **Բարձրագույն ուսումնական հաստատություններին հարկ է խրախուսել՝ ուժեղացնելու գործնական ուսուցման բաղադրիչները, փոխանցելի հմտությունները և պրակտիկաները բոլոր աստիճանաշնորհող ծրագրերում:** Մա ոչ միայն ուսանողներին կտա հնարավորություն՝ կիրառել իրենց հմտությունները աշխատանքային միջավայրում, այլև կբարելավի ուսումնական ծրագրի և աշխատաշուկայի համապատասխանությունը:

Իրավիճակը բարելավելու հիմնական ձևերից մեկը ավելի մեծ թվով գործատուներ (արդյունաբերություն, ՓՄՁ-ներ, Կառավարություն և այլն) ներգրավելն է մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներում, ինչպես նաև հաստատությունների Հոգաբարձուների խորհուրդների կազմում: Մակայն հավասարապես կարևոր է բարելավել պրոֆեսորադասախոսական կազմի գիտելիքը աշխատաշուկայի զարգացումների վերաբերյալ: Անհրաժեշտ է իրազեկել պրոֆեսորադասախոսական կազմին հայաստանյան աշխատաշուկայի ներկա և ապագա միտումների մասին: Անհրաժեշտություն կա ներգրավելու գործատուների ներկայացուցիչներին ուսումնական ծրագրերի վերանայման հանձնաժողովներում: Գործատուների ներկայացուցիչների ներգրավումը օգտակար է՝ արդյունաբերության և լսարանի միջև խզումը կամրջելու համար:

Համալսարանները ղեռնս չունեն որևէ խթան՝ ակտիվացնելու բարձրագույն կրթության դերը սոցիալական, մշակութային զարգացման կամ մթնոլորտի փոփոխության գործում: Համալսարանները ստանձնում են մի շարք սոցիալական և մշակութային նախաձեռնություններ, բայց սա չունի ռազմավարական կենտրոնացում, հավանաբար բացառություն են հայոց լեզուն և մշակույթը: Հիմնականում համալսարանները դիտարկվում են որպես այնպիսի վայրեր, որտեղ միայն դասեր, քննություններ և հետազոտություններ են իրականացվում: Համալսարանների դեկավարությունը, պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողները կարևոր դեր կխաղան այս ընկալումը փոխելու գործում՝ իրենց մտայնություններում ամրապնդելով սոցիալական և մշակութային փոփոխությունը:

Երախտիքի խոսք

Այս զեկույցը կազմվել է Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի փոխնախարար Արևիկ Անափիոսյանի խնդրանքով և ընդհանուր ռազմավարական ուղղորդմամբ: Բացի այդ, այս զեկույցը հնարավոր է դարձել Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության վարչության պետ Ռոբերտ Սուքիասյանի շարունակական աջակցության շնորհիվ: Բանկի կողմից այս զեկույցի մշակումը ղեկավարել է Կոեն Գեվենը, որը ղեկավարում է Կրթական արդյունքների բարելավմանն ուղղված մոտեցմամբ (SABER) բարձրագույն կրթության ծրագիրը: Երևանից, Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակից զեկույցի մշակման ընթացքում բովանդակային ուղղորդումը և ջանքերի համակարգումն իրականացրել է Անուշ Շահվերդյանը: Գլխավոր հետազոտողն էր Սերոբ Խաչատրյանը, որը վարեց խորհրդակցությունները և իրականացրեց տվյալների հավաքումը, իսկ զեկույցի հիմնական հեղինակը Գագալա Մայիդն է: Մենք շնորհակալություն ենք հայտնում հարցազրույցներին մասնակցած բոլոր անձանց, մասնավորապես՝ Ալեքսանդր Գրիգորյանին և Գայանե Հարությունյանին՝ Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի իրենց խորքային ներհայեցման համար: Այս զեկույցն անհնար կլիներ առանց Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի ղեկավար Սիլվի Կ. Բոստրոյին: Նմանապես մեր երախտիքն ենք հայտնում Բանկի կողմից հետևյալ աշխատակիցներին՝ իրենց աջակցության և համբերության համար. Լիբե Էրսատո՝ Մարդկային զարգացման ծրագրի ղեկավար, Ալեքսան Հովհաննիսյան՝ Գործառնությունների գծով գլխավոր պատասխանատու, Հարրի Ա. Պատրինոս Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում Պրակտիկայի ղեկավար, Ֆրանցիսկո Մարմոլեխո՝ բարձրագույն կրթության գլխավոր մասնագետ, Դենիս Նիկոլան՝ կրթության մասնագետ, Սորեն Նելլման՝ գլխավոր տնտեսագետ և Կատյա Մարինա Հերերա Սոսա՝ գլխավոր տնտեսագետ:

Հապավումներ

Բուհ	բարձրագույն ուսումնական հաստատություն
ՄՊԸ	սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՈԱԱԿ	Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն
ՊՈԱԿ	պետական ոչ առևտրային կազմակերպություն
ԿԳՄՄՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՀԱՀ	Հայաստանի ամերիկյան համալսարան
ԲԿՈԱԳՄՑ	Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանց
ՈԱԵՑ	Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ցանց
ՈԱԵԳ	Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական գրանցամատյան
TEMIS	Բարձրագույն կրթության կառավարման տեղեկատվական համակարգ
ԿՏԱԿ	Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն
ԿՓԿՀ	Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգ
ARMENIC	Ակադեմիական փոխձանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնը (ԱՓՇՏԱԿ)

ՀԶՆ

ԳԿԳԱԲԶ

Հետազոտություն, զարգացում և նորարարություն

Գինեգործական կրթության գիտաարտադրական բաղադրիչի զարգացում

Հավելված – «Կրթական արդյունքների բարելավմանն ուղղված մոտեցում – բարձրագույն կրթություն» (SABER-Tertiary Education)

1. Բարձրագույն կրթության ռազմավարություն			
1.1	1.2	1.3	
Երկիրը/պետությունն ունի ամբողջովին մշակված բարձրագույն կրթության ռազմավարական ծրագիր, որը հանդես է գալիս որպես համակարգը ղեկավարող ուղեցույց:	Բարձրագույն կրթության ռազմավարական ծրագրի մշակումը համապատասխան է և ներկայացուցչական, ներառում է հիմնական շահակիցների կարծիքները և մոտեցումները և դիտարկում է քաղաքականության հիմնական լծակները:	Բարձրագույն կրթության ռազմավարական ծրագիրը հիմնված է համակարգային իրողությունների հստակ և վերաբերելի, ինչպես նաև հանրայնորեն հասանելի ապացույցների վրա:	
2. Համակարգերի և հաստատությունների կառավարում			
2.1	2.2	2.3	2.4
Երկիրն ունի բարձրագույն կրթության մասին համակողմանի օրենք, որի կիրարկումը հանգեցնում է համակարգի օպտիմալ կատարողականի և վերաբերում է երրորդ աստիճանի կրթության բոլոր տեսակներին:	Կարգավորման շրջանակը ներառում է այնպիսի դրույթներ, որոնք պատշաճ կերպով կանոնակարգում են մուտքը շուկա և պետական մասնավոր բարձրագույն կրթական ծառայությունների գործառնությունները:	Երկիրն ունի քաղաքականությունների և աշխատակարգերի համակազմ, որը պայքարում է ակադեմիական չարաշահումների և կոռուպցիայի դեմ:	Բուհերի համար նախատեսված կարգավորման շրջանակը սատարում է նրանց ակադեմիական ինքնավարությանը:
2.5	2.6	2.7	2.8
Բուհերի կարգավորման շրջանակը սատարում է	Պետական բուհերի կարգավորման շրջանակը սատարում	Բուհերին վերաբերող կարգավորման շրջանակը	Կարգավորման շրջանակը խթանում է բուհերի մակարդակում

աշխատակազմի համալրման ինքնավարությանը:	է նրանց կառավարման ինքնավարությանը:	աստարում է նրանց ֆինանսական ինքնավարությունը:	կառավարման թափանցիկ աշխատակարգերի տարածումը:
2.9	2.10		
Կարգավորման շրջանակը խթանում է բուհերի մակարդակում մարդկային ռեսուրսների և վերաբերող թափանցիկ և արժանիքների վրա հիմնված աշխատակարգերը:	Կարգավորման շրջանակը խթանում է բուհերի մակարդակում հորիզոնական կառավարման աշխատակարգերի տարածումը:		
3. Ֆինանսավորում			
3.1	3.2	3.3	3.4
Պետական ֆինանսական միջոցները հատկացվում են պետական բուհերին՝ կայուն և թափանցիկ գործընթացի միջոցով և միանվագ բյուջետային դրամաշնորհների համակարգի գործարկմամբ:	Կա հանրայնորեն ճանաչված կամ հասանելի բանաձև, որով հաշվարկվում է է պետական գումարները պետական բուհերին հատկացնելը որպես ֆիքսված և փոփոխական ֆինանսավորում:	Կատարողականի վրա հիմնված ֆինանսավորումը օգտագործվում է որպես պետական բուհերի համար ֆինանսների հատկացման մեխանիզմի մաս:	Պետական բուհերը կարող են շահակիցների, օրինակ՝ կառավարության կամ բարձրագույն կրթության ոլորտում գործող գործակալությունների հետ բանակցել առնվազն մի շարք կատարողականի թիրախների շուրջ:
3.5	3.6		

<p>Մասնավոր բուհերը կարող են շահակիցների, օրինակ կառավարության կամ բարձրագույն կրթության ոլորտում գործող գործակալությունների հետ բանակցել առնվազն մի շարք կատարողականի թիրախների շուրջ:</p>	<p>Կա բուհերին հասանելի ֆինասնավորման առնվազն մեկ մրցակցային գիծ՝ ուղղված նորարարության խթանմանը կամ ազգային առաջնահերթություններին:</p>		
---	--	--	--

4. Որակի ապահովում

4.1	4.2	4.3	4.4
<p>Կա առնվազն մեկ գործառնական և արդյունավետ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործակալություն կամ որակի ապահովման գործակալություն, որը վերահսկում է երկրի բոլոր բուհերի որակը:</p>	<p>Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործակալությունները կամ որակի ապահովման գործակալությունները գործում են որպես անկախ մարմին:</p>	<p>Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործակալությունը(ները) կամ որակի ապահովման գործակալությունը(ները) մշակել են ինստիտուցիոնալ որակի չափանիշներ կամ ծրագրային որակի չափանիշներ, որոնք կկիրառեն իրենց գնահատումներում:</p>	<p>Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործակալությունը(ները) կամ որակի ապահովման գործակալությունը(ները) խթաններ են տրամադրում բուհերին ստեղծելու կառավարման տեղեկատվական համակարգեր ինստիտուցիոնալ կամ ծրագրային որակի չափանիշների միջոցով:</p>
4.5			
<p>Գնահատման/ հավատարմագրման չափանիշներին չհամապատասխանելը ծրագրերի/բուհերի համար կարող է</p>			

հանգեցնել կոնկրետ հետևանքների:			
5. Բարձրագույն կրթության կառավարման տեղեկատվական համակարգ (TEMIS)			
5.1	5.2	5.3	5.4
Կա առնվազն մեկ գործող ազգային կամ տարածաշրջանային TEMIS:	TEMIS-ը հավաքում է ուսանողների մասին տվյալներ:	TEMIS-ը տվյալներ է հավաքում ըստ ինստիտուցիոնալ հետազոտության, զարգացման և նորարարության ցուցանիշների:	TEMIS-ը տվյալներ է հավաքում ըստ ՊԴ կազմին վերաբերող ցուցանիշների:
5.5			
TEMIS-ը լայնորեն օգտագործվում է համակարգի գնահատման և բարեփոխման համար:			
6. Մատչելիություն և հավասար հնարավորություններ			
6.1	6.2	6.3	6.4
Առկա են անապահով ուսանողներին ֆինանսական օժանդակություն տրամադրող պետական ծրագրեր՝ միտված հավասար հնարավորությունների ապահովման նպատակներին մատչելիության և համակարգից դուրս չմնալու առումով:	Ծախսերի համաֆինասնավորման առկա մեխանիզմները արդյունավետ կերպով ծառայում են թիրախային շահառուների կարիքներին:	Երկիրն ապահովում է բուհերում ընդգրկվելու համար նվազագույն և թափանցիկ չափորոշիչներին համապատասխանությամբ, ինչպես նաև այն, որ բոլոր իրավասու ուսանողներն ունեն հասանելիություն ընտրության ընթացակարգերին:	Կարգավորման շրջանակը խրախուսում է բուհերում իրազեկության բարձրացման ծրագրերի ստեղծումն ու իրականացումը:
6.5	6.6		
Առկա է և երկրում գործում է	Բարձրագույն կրթության		

<p>խտրականությունը և ոտնձգությունները բացառող օրենսդրություն, որը կիրարկվում է բարձրագույն կրթության ոլորտի նկատմամբ:</p>	<p>համակարգն ունի կառավարման նպաստավոր կառուցվածք, որն աշխուժացնում է սոցիալական շարժունությունը հաստատությունից հաստատություն ուսանողների տեղափոխությունն երի միջոցով:</p>		
---	---	--	--

7. Սոցիալ-տնտեսական կարիքների համապատասխանությունը

7.1	7.2	7.3	7.4
<p>Առկա են ուսումնասիրություններ, որոնք չափում են բուհերի շրջանավարտների ուսումնառության արդյունքը աշխատաշուկայի պահանջների հետ համեմատությամբ:</p>	<p>Առկա են պրակտիկաները և գործնական ուսուցումը սատարող ծրագրեր:</p>	<p>Առկա են ծրագրեր, որոնք ուղղված են բուհական ուսումնական ծրագրի՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխանության բարձրացմանը:</p>	<p>Առկա է քաղաքականության պահանջ, որն ուղեկցվում է ֆինանսական խթաններով և ուղղված է բարձրագույն կրթության ոլորտում ^{ՀԶՆ} գործունեության զարգացմանն ու հզորացմանը:</p>
7.5	7.6		
<p>Առկա է քաղաքականության պահանջ, որն ուղեկցվում է ֆինանսական խթաններով և միտված է բարձրագույն կրթության դերի ամրապնդմանը սոցիալ-մշակութային</p>	<p>Առկա է քաղաքականության պահանջ, որն ուղեկցվում է ֆինանսական խթաններով և միտված է բարձրագույն կրթության դերի ամրապնդմանը շրջակա միջավայրի պահպանության և</p>		

զարգացման գործում:	կայունության ապահովման գործում:		
-----------------------	---------------------------------------	--	--

«Կրթական արդյունքների բարելավմանն ուղղված մոտեցում – բարձրագույն կրթություն» (SABER) նախաձեռնությունը տվյալներ է հավաքում ամբողջ աշխարհում կրթության համակարգերի քաղաքականությունների և հաստատությունների մասին և համեմատաբար վերլուծում է դրանք ուսանողների ուսումնառության հետ կապված աշխատակարգերի համատեքստում: Այս մոտեցման նպատակն է կրթության արդյունքներին մասնակից բոլոր կողմերին՝ ուսանողներին, վարչակազմին, դասախոսներին, քաղաքականություն մշակողներին և գործարարներին տալ հասանելի, մանրակրկիտ, օբյեկտիվ պատկեր առ այն, թե որքան դրականորեն են իրենց երկրի կրթահամակարգի քաղաքականությունները միտված դեպի բոլոր երեխաների և երիտասարդների ուսուցման ապահովումը:

Այս զեկույցը մասնավորապես կենտրոնանում է **Բարձրագույն կրթության** ոլորտի քաղաքականությունների վրա: Այն վերլուծում է բարձրագույն կրթությունը քաղաքականության յոթ ուղղություններով՝ (1) բարձրագույն կրթության ռազմավարություն, (2) ոլորտի կառավարում, (3) նորարարությանն ուղղված ֆինանսավորման գործածություն, (4) որակի ապահովում, (5) բարձրագույն կրթության կառավարման տեղեկատվական համակարգի առկայություն (TEMIS), (6)



WORLD BANK GROUP

Այս զեկույցը Համաշխարհային բանկի աշխատակազմի գործունեության արդյունքն է՝ արտաքին դերակատարների մասնակցությամբ: Այս զեկույցում ներկայացված եզրահանգումները, մեկնաբանությունները և եզրակացությունները կարող են չհամընկնել Համաշխարհային բանկի, Գործադիր տնօրենների խորհրդի կամ նրանց ներկայացրած երկրների տեսակետների հետ: Համաշխարհային բանկը չի երաշխավորում այս աշխատանքում ներառված տվյալների ճշգրտությունը: Այս աշխատանքում ներկայացված սահմանները, գույները, դրամական միավորները և այս զեկույցի մեջ ներառված որևէ քարտեզի վրա պատկերված այլ տեղեկությունները չեն կարող համարվել Համաշխարհային բանկի՝ որևէ տարածքի իրավական կարգավիճակի, դրա սահմանների հաստատման կամ ընդունման վերաբերյալ դատողություն: